ՀՏԴ : 947.925«1915»

Doi:10.54503/0135-0536-2025.2-3

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
110-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՎԱՆԻ 1915 Թ. «ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԺԽՏԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ*

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Վանի 1915 թ. «ապստամբություն», ինքնապաշտպանություն, կոտորած, ժխտելիություն, խռովություն, պանթուրքիզմ, Հայոց ցեղասպանություն, թուրքական դիվանագիտություն, եվրոպական դիվանագիտական տեսակետներ:

Ամփոփում

Վանի 1915 թ. «ապստամբության» հիմնահարցն ունի ինչպես քաղաքական, այնպես էլ գիտական մեծ կարևորություն, քանի որ այն պատճառ դարձավ Օսմանյան կայսրության մեջ բնակվող հայ և թուրք ժողովուրդների հարաբերությունների վատթարացմանն ու Հայոց ցեղասպանության իրականացման չարժահիմներից: Օսմանյան Թուրքիայի «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեն արևմտահայերի տեղահանության ու բնաջնջման իր դիվային քաղաքականությունն իրականացնելու համար ստեղծեց գաղափարական կեղծ հիմնավորում՝ արդարացնելու համար կառավարության հանցապարտ այն գործելակերպը, որի հետևանքով 1915–1916 թթ. բնաջնջվեցին չուրջ 1,5 մլն արևմտահայեր: Թուրքական քաղաքական շրջանակներն առաջ քաշեցին Վանի 1915 թ. ապրիլյան հերոսամարտի՝ իրենց ձևակերպմամբ՝ Վանի «ապստամբության» կեղծ թեզը, որը ներկայացվեց որպես հայերի «դավաճանության» դրսևորում և հայկական կոտորածների դրդապատճառ:

Նախաբան

Թուրքական քաղաքական շրջանակները, թուրք պատմաբաններն ու նրանց աղրբեջանցի գրչակները[1] փորձել են և այսօր էլ փորձում են արևմտահայերի ինքնապաշտպանական կռիվները, հատկապես՝ Վանի 1915 թ. ապրիլյան

---

* *Ներկայացվել է 15. V. 2025 թ., գրախոսվել է 22. V. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

© *Հեղինակ/ներ, 2025: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:*

[1] *Տե՛ս* Feridun. 1962, 81; Гасымлы. 2014, 357; *նաև՝* Гасанлы. 2015.

հերոսամարտը[2] իրենց ձևակերպմամբ՝ Վանի «ապստամբությունը», ներկայացնել որպես հայերի «դավաճանության» փաստարկ, և այն լայնորեն չահարկում են որպես «հայկական աղետի» սկզբնապատճառ[3]: Արևմտահայերի «ապստամբության» թեման առաջին անգամ կիրառվել էր դեռևս 1909 թ. Ադանայի կոտորածների առիթով[4]: Սակայն հայերին քաղաքականապես զրպարտելու այդ մեթոդաբանությունը լայնորեն գործողության մեջ է մտնում Առաջին աշխարհամարտի հայտարարման և Կովկասյան ռազմաճակատում պատերազմական գործողությունների ծավալմանը մեկտեղ:

Ե. Օտյանը վերհիշում է, որ «««Վանի դեպքեր»-ի մասին տարագրության ժամանակ շատ անգամներ լսած էի թուրքերու կողմէ, իբրեւ արդարացումը իրենց վայրագ անլուր գազանութիւններուն»[5]: Իսկ Ա. Խատիսյանն էլ նկատում է, որ Տրապիզոնի 1918 թ. բանակցությունների ժամանակ թուրքական պատվիրակությունը, որը գլխավորում էր Ռեուֆ բեյը, արևմտահայերի 1915 թ. հետապնդումները և կոտորածները փորձում էր բացատրել Վանում կազմակերպած հայերի «ապստամբությամբ» և այն պատճառաբանությամբ, որ հայերը զինված էին[6]:

Վանի «ապստամբության» հիմնախնդիրը

Թուրքական պատմագիտության մեջ ժամանակի ընթացքում տիրապետող է դառնում հակահայկական և հակագիտական այն հայեցակարգը, որ Վանի նահանգի 1914–1915 թթ. կոտորածները, Կ. Պոլսի հայ մտավորականության ու հեռագրատների գրաքննիչների 1915 թ. ապրիլի 11 (24)-ի աքսորը, Կարինի, Բասենի, Դերսիմի տեղահանությունները և, ընդհանրապես, Հայոց մեծ եղեռնի դրդապատճառները պայմանավորված են եղել՝ ա) ռուսական իշխանությունների հետ արևմտահայերի քաղաքական հզոր դաշինքով (Ամենայն Հայոց կաթողիկոսի և Կովկասի փոխարքա կոմս Իլլարիոն Ի. Վորոնցով-Դաշկովի միջև կնքված 1914 թ. համաձայնագրի համաձայն Ռուսաստանը պետք է ստիպեր Բ. Դռանը բարենորոգումներ անցկացնել Արևմտյան Հայաստանում, փոխարենը՝ հայերը պարտավորվում էին անվերապահորեն ռազմական օժանդակություն ցույց տալ ցարական կառավարությանը: Այդ նպատակով կաթողիկոսը 1914 թ. նոյեմբերի 29-ին Թիֆլիսում հանդիպեց Նիկոլայ Բ ցարին)[7], բ) Կովկասյան ռազմաճակատում 1914 թ. կազմակերպված հայկական կամավորական ջոկատների ռազմական գործողություններով և ռուսական զորքերի առաջխաղացմամբ, գ) օսմանյան «հայրենիքի» դեմ ուղղված Վանի նահանգի հայության 1914–1915 թթ. «հակապետական» (ինքնապաշտպանական) ելույթներով և

---

[2] *Մ ա հ ա կ յ ա ն. 2005:*

[3] *Ա տ ո ս խ ի ս. 2009, 18:*

[4] *Տե՛ս* M o u c h e g h [S e r o b i a n]. 1909; *նաև Մ ո ւ շ ե ղ. ե պ ս. 1910, նաև՝* Записки Джемаль Паши 1913–1919. 1923, 214; D a n i ş m e n d. 1971, 374; U r a s. 1950, 456; *նաև Ատանայի հայոց պատմութիւն. պատմագրական եղեռնագրական, ազատագրական, մշակութային, ազգագրական, վաւերագրական, ժամանակագրական. 1970, 225, 304:*

[5] *Օ տ ե ա ն. 2004, 452:*

[6] *Տե՛ս Խ ա չ ա տ ր յ ա ն. 2010, 203:*

[7] *Տե՛ս* Армянский вопрос на страницах турецкой прессы (1982–1983). 1984, 72.

դ) Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Հ. ֆոն Վանգենհայմի կարծիքով, հավանաբար, «ռուսական խարդավանքների» հետևանքով կազմակերպված Վանի ազգաբնակչության 1915 թ. «ապստամբությամբ»[8]:

Թուրք հեղինակների կողմից որպես ցեղասպանության անհերթեր դրդապատճառ է ներկայացվում նաև հայերի ազգային անկախության ձգտումը, որը վտանգում էր Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը և անվտանգությունը: Որպես այդ ամենի «ապացույց»՝ թուրքական պատմագիտական դպրոցը ելակետ է ընդունում այն հիմնազուրկ «փաստարկը», որ, իբր, ՀՅԴ կենտրոնական կոմիտեն իր տեղական օղակներին հրաման էր տվել այն մասին, որ երբ ռուսական զորքերը Կովկասյան ճակատում անցնեին ռուս-թուրքական սահմանը և թուրքական բանակը պարտություն կրելով սկսեր նահանջել, Արևմտյան Հայաստանի բոլոր վայրերում հարկավոր էր կազմակերպել ապստամբություններ, որպեսզի թշնամին հայտնվեր երկու քարի արանքում: Իսկ թուրքական զորքերի հնարավոր հարձակման դեպքում թուրքական բանակի հայ զինվորներն իրենց զենքով պետք է լքեին իրենց զորամասերը, կազմակերպեին պարտիզանական ջոկատներ և միանային ռուսական զորամիավորումներին: Ըստ թուրքական «հիմնավորման»՝ այս հրամանը և ցուցումը կարծես թե ի կատար ածվեց այն բանից հետո, երբ ռուսական բանակը հայ կամավորական ջոկատների ուղեկցությամբ 1914 թ. աշնանն անցավ հարձակման, և թուրքական բանակում ծառայող հայերը կա՛մ միացան ռուսական զորքերին, կա՛մ էլ կազմեցին պարտիզանական ջոկատներ[9]:

Ժամանակի թուրքական լրատվամիջոցներում պարբերաբար շրջանառվում էր այն տեղեկատվությունը, որ Ռուսաստանը պատերազմի նախօրյակին առանձնացրել էր 242.900 ռուբլի՝ արևմտահայերին սպառազինելու, պատրաստելու և թուրքերի դեմ ապստամբություն կազմակերպելու համար[10]:

Մեղադրանքի նման ոճն էր գործածում նաև Կ. Պոլսի թուրքական «Թուրան» պարբերականը, որը, 1914 թ. դեկտեմբերին լույս տեսած «Ռուսիա և հայեր» խորագիրը կրող խմբագրականներից մեկում մեջբերելով Վանի նահանգապետ Թահիր Ջևդեթի խոսքը, նշում էր, որ «... այո՛, եթե թուրքերը ուզէին հայերը մէջտեղէն վերցնել, կրնային անարգել իրենց այս նպատակը իրագործել և ոչ ոք կը համարձակէր անոնց գործին խառնուել: Այսպէս հաստատած էր երիտասարդ թուրքերի կառավարութիւնը և գործի էլ անցաւ ...Վանը իր շրջականերով ապստամբութեան դրօշակ պարզելու պատրաստութեան վրա է: Վռամեանն ու Արամը գաղտնի բանակցութիւնների մէջ են Պարսկաստանի կամաւորների հետ, այդ հաստատող մի գրութիւն, որ բռնած է սահմանի վրայ, մեր ձեռքին է»[11]:

Հայերի «ապստամբության» և դրանից բխող հայկական կոտորածների դրդապատճառների պաշտոնական բացատրությունն առաջին անգամ ներկա-

---

[8] *Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2006, 150:*

[9] *Տե՛ս* Армянский вопрос на страницах турецкой прессы (1982–1983). 1984, 73.

[10] *Տե՛ս* Армянский вопрос на страницах турецкой прессы (1982–1983). 1984, 74.

[11] *Ա–Դ օ. 1917, 162:*

յացրել է անձամբ Օսմանյան Թուրքիայի ներքին գործերի, փոստի և հեռագրության նախարար Մ. Թալեաթը՝ նշելով. որ «...այն, ինչ տեղի ունեցավ հայերի հետ՝ պատիժ էր Օսմանյան պետությանը նրանց դավաճանելու, պատերազմում նրանց՝ Ռուսաստանին միանալու և 1915 թ. ապրիլին Վանում ապստամբվելու համար»[12]:

Օսմանյան Թուրքիայի ծովային նախարար Ջեմալ փաշան ևս, որը բազմիցս փորձել էր իրեն չքմեղ ձևացնել հայերի տարագրության ու կոտորածների անմիջական կազմակերպման հարցում, հետ չմնալով Մ. Թալեաթից, ընդունում էր, որ հայերն ընդվզել էին իշխանությունների դեմ, և հայերի «ապստամբությունը» համարում էր աղետ օսմանյան պետության համար: Այդ առիթով նա նշում է. «Համենայն դեպս, յես այն հաստատ համոզմանն եմ, վոր հայերը ծրագրել եյին մի ապստամբություն, վորը վտանգում եր մեր բանակի թիկունքը և վորը, ըստ հանգամանքի, կարող եր նրան վոչնչացման տանել: Այդ ունենալով աչքի առաջ, իմ ընկերները յեկել են այն վորոշմանը, վոր անհրաժեշտ ե ամբողջ հայ ժողովուրդը մի այնպիսի յերկիր տեղափոխել, ուր նրանք մեզ վո՛չ մի վնաս չեյին կարող հասցնել, այնինչ, հայերին իրենց տեղերում թողնելով, նրանք Ոսմանյան հայրենիքը յենթարկած կլինեյին մի կատաստրոֆայի, վորը տեղի կունենար, յեթե Ռուսաստանը Փոքր-Ասիան տիրեր»[13]:

Վանի հայերի 1915 թ. ինքնապաշտպանության հարցը հետաքրքրել է նաև Աբդուլ Համիդ II-ին: Թուրք պատմաբան Մ. Հյուսեյնը իր հուշերում ներկայացրել է գահընկեց եղած սուլթանի մոտեցումը Վանի «ապստամբության» մասին, ուր վերջինս մանավորապես նշում է. «Թերթերում կարդացի, որ հայերը Վանում ռուսների հետ են դաշնակցում: Ես ճիշտ էի: Դավաճաններ: Միայն թե այստեղ էլ (Ստամբուլում) ապստամբություն չանեն: ... Այժմ ճշմարտությունն ի հայտ է գալիս: Եկեղեցիներում, պահեստներում ռումբ, ատրճանակ, զենք էին պահում: Այս ամենից ես ավելի քան տեղյակ եմ»[14]:

Վանի հերոսական ինքնապաշտպանությունը քննարկման նյութ է դարձել թուրքական կառավարության 1915 թ. հունիսի 16-ի հայտարարության մեջ, որտեղ նշվում էր, որ Ռուսաստանն Առաջին աշխարհամարտի կովկասյան ճակատում հաղթանակի հասնելու համար դիմեց այնպիսի օժանդակ քայլերի, որոնք անծանոթ էին ժողովուրդների ռազմական պատմության մեջ: Օգտվելով հայ բնակչության մի մասի անգիտությունից ու միամտությունից՝ Ռուսաստանը հայերին «սովորեցրեց ըմբոստանալու Օսմանյան կայսրության դեմ: Ռուսաստանը չամաչեց ... այդ սադրիչ չարժման հետևանքով Բաշկալեում և Վանի շրջակայքում ստեղծված իրավիճակն աշխարհին ներկայացնել որպես զենքի հաղթանակի արդյունք»[15]:

Վանի հայերի «ապստամբության» մտածածին այս հայեցակարգը դարձավ թուրքական գիտաքաղաքական գեղծարարության առաղձը: Ժամանակին այս ամենի մասին ճիշտ էր կանխազգում Կ. Պոլսի Հայոց պատրիարք Զավեն արք. Եղիայանը, երբ նշում էր. «Հայությեան բնաջնջումի այս ծրագիրը, որ վաղուց

---

[12] *Հովհաննիսյան. 2004, 139:*

[13] *Ջեմալ-փաշա. 1927, 53:*

[14] Hülagü. 2007, 253; *Մելքոնյան, Պողոսյան. 2022, 15–16:*

[15] *Պողոսյան. 2011, 165:*

յղացուած էր, գործադրութեան դրուելու պատրուակ բռնելով Վանայ դէպքերը Կովկասի սահմանագլուխի վրայ մերայնոց ըրած չարժումները եւ իբր թէ գաւառներուն մէջ հայոց ապստամբելու մտադրութիւնը, որուն համար պինուած է եղեր, կասեցնելու համար կարելի միջոցները գործադրուեցան մեր կողմէ»[16]:

Նման կանխազգացում ուներ նաև հայ ժողովրդական վրիժառու Ա. Շիրակյանը, երբ համոզմունք էր հայտնում, որ «Թրքական կառավարութիւնը պիտի չահագործէր» Վանի դեպքը՝ այն ներկայացնելով որպես ծրագրված հայկական ընդհանուր ապստամբության փորձ, որի նպատակն էր, իբր, թիկունքից հարվածել թուրքական բանակին[17]:

Հաշվի առնելով թուրքական զրպարտությանը հակազդելու կարևորությունը՝ անգլիացի պետական գործիչ, իրավաբան, պատմաբան լորդ Ջ. Բրայսը կարևորում էր այն հանգամանքը, որ «Վանայ դէպքերը խիստ կարեւոր ըլլալով»՝ հարկավոր էր այն ուսումնասիրել անթաքույց անաչառությամբ, որովհետև Վանի ինքնապաշտպանությունը պատճառ դարձավ Օսմանյան կայսրութեան մեջ հայ և թուրք ժողովուրդների հարաբերությունների խզմանը[18]: Հետևաբար, Վանի «ապստամբության» հիմնախնդիրը խորությամբ ուսումնասիրելու, ընկալելու և այն հասկանալի դարձնելու համար, փորձենք վեր հանել և ներկայացնել ինչպես Օսմանյան Թուրքիայի և Քառյակ միության, այնպես էլ Անտանտի երկրների առավել կարևոր պետական հայեցակարգային մոտեցումներն ու քաղաքական գործիչների և ուսումնասիրողների տեսակետները, որոնք, լինելով խիստ հակասական, պահպանվել են դիվանագիտական տարբեր զեկուցագրերում ու պատմագիտական աշխատություններում:

Վանի «ապստամբության» թուրքական հայեցակարգը

Այս հարցի վերաբերյալ դիրքորոշումների բացարձակ նմանօրինականությունն է զգացվում թուրքական մեկնաբանություններում: Հիմք ընդունելով թալեաթածին հնարքը հայերի «ապստամբության» վերաբերյալ՝ թուրք պատմաբան Թ. Բըյըքլըօղլուն ամերիկացի պատմաբան Ս. Ֆիշերի «Մերձավոր Արևելքի պատմությունն» գրքի մասին գրած իր գրախոսականում նենգափոխելով իրական փաստերը՝ մինչև վերջ պաշտպանում է հեղինակի այն թյուր և հնարովի կարծիքը, որ, իբր, Վանի ու Կարինի նահանգներում բնակող հայերը 1915 թ. գենքի դիմեցին հատկապես ռուսական զորքերին օգնելու համար[19]:

Երիտթուրքերի կողմից կազմակերպված «պատժիչ միջոցառումները», այն է՝ արևմտահայերի կոտորածները, թուրք պատմաբան Հ. Բայուրը «Թուրքական հեղափոխության պատմությունը» գրքում ընութագրում է որպես հարկադրված քայլեր, որոնց նրանք ստիպված էին դիմել պետության անվտանգությունն ապահովելու համար: Այդ պատճառով էլ նա հանդիմանում է բոլոր նրանց, ովքեր սուլթանական կառավարության կողմից հայերի տեղահանումը 1914–1918 թթ. պատերազմի ժամանակ համարում էին բռնության գործողութ-

---

[16] *Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի տեղեկագիր մատյան. Երևսաղեմի Հայոց պատրիարքարան. 2024, 41:*

[17] *Տե՛ս* Շ ի ր ա կ ե ա ն. *1991, 44:*

[18] *Տե՛ս* Պ ր ա յ ս. *1920, 46:*

[19] *Տե՛ս* F i s h e r. 1959, 326–327.

յուն: Հ. Բայուրը, հենվելով թուրք պատմաբան է. Ուրասի կեղծարար պնդումների վրա, գտնում է, որ երիտթուրքական կառավարությունը մեղավորություն չի ունեցել հայկական ջարդերի կազմակերպման գործում, քանի որ վաղօրոք իմանալով Անտանտի երկրների օգնությամբ Վանում նախապատրաստվող հայերի ապստամբության մասին՝ իշխանությունները որոշել էին սահմանամերձ շրջաններից նրանց հեռացնել և տեղափոխել Միջագետք: Հ. Բայուրի ու է. Ուրասի «համոզմամբ» երիտթուրքական կառավարությունը մեղավոր չէր, որ «այդ հայերը զոհվեցին»[20]:

Մեկ այլ թուրք հեղինակ՝ Ա. Է. Յալմանը, փորձելով հերքել ռուս դիվանագետ և միջազգային իրավունքի դոկտոր Ա. Մանդելչտամի այն համոզիչ պնդումը, որ հայերի մտքում անգամ չէր եղել թուրքական կառավարության դեմ ապստամբություն բարձրացնելու գաղափարը, և որ նրանք զենքի դիմեցին միայն այն ժամանակ, երբ անխուսափելի մահը սպառնում էր իրենց, գրում է. «Հայերի վարքագիծը լիովին արդարացնում էր նրանց աքսորելը»[21]:

Գերմանական, ավստրո-հունգարական և իտալական դիվանագիտական տեսակետները

Համանման մտայնությամբ է լեցուն նաև գերմանական, ավստրո-հունգարական և իտալական դիվանագիտական տեղեկատվությունը: Հիմք ընդունելով Վանից հաղորդվող թուրքական ստահոդ տեղեկությունները՝ գերմանական վավերագրերը «փաստում» են, որ հայերն ունեին «լիառատ զէնք ու պայթուցիկ նիւթեր ... Մեռելոց մէջ գտնուած են շատեր՝ ռուսական տարազով ... Հայ ապստամբները բազմիցս յայտնած են Վանէն միանալ ռուսերու հետ»[22]: Դեռ ավելին, դեսպան Հ. Ֆոն Վանգենհայմին ուղղված գերմանական դիվանագիտական տեղեկությունը հաղորդում էր, որ «հատկապես Վանը և այնտեղի ռուսական հյուպատոսությունը հնուց ի վեր եղել է ռուսների սադրիչ կենտրոնը, որը կարողացել է առավել անարգել գործել ...»[23]: Նույն մտայնությամբ էր առաջնորդվում նաև Կարինի գերմանացի հյուպատոս Մ. Է. Ֆոն Շոյբներ-Ռիխտերը, որը հայտնում էր՝ բացառությամբ Վանի, արևմտահայերի ապստամբությունները հանպատրաստից էին և կրում էին սոսկ ինքնապաշտպանական բնույթ[24]:

Դեսպան Հ. Ֆոն Վանգենհայմը ռայխսկանցլեր Թ. Ֆոն Բեթման-Հոլվեգին ուղղված 1915 թ. ապրիլի 30-ի հեռագրում կարևորում էր այն հանգամանքը, որ օսմանյան «կառավարության որոշումների վրա չէին կարող ազդեցություն չգործել Վանի դեպքերը և այս օրերին ռուսների իբր հաջորդող հարձակումները Բոսֆորում, ինչպես նաև ֆրանսիացիների և անգլիացիների միացյալ հարձակումները Դարդանելի վրա»[25], որոնք նպատակ են ունեցել վտանգել թուրքական բանակի թիկունքը:

---

[20] B a y u r. 1940, 67.

[21] A h m e d. 1930, 215.

[22] *Տ ա շ ե ա ն. 1921, 12:*

[23] *Բ ա ր ս ե ղ յ ա ն. 2011, 13:*

[24] *Տե՛ս Տ ա տ ր յ ա ն. 2005, 17:*

[25] *Գ ո ւ ս տ. 2008, 40, նաև՝ Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2006, 162:*

Իր հերթին Դամասկոսի նախարար-ռեզիդենտ բարոն Մ. ֆոն Օպենհայմը ռայխսկանցլեր Բեթման-Հոլվեգին հղած 1915 թ. օգոստոսի 29-ի հեռագրում հավաստիացնում էր, որ «Վանի տարածքում և արևելյան Փոքր Ասիայում չուտով պարզ դարձավ, որ խոսքը թշնամու (ակնարկը նախևառաջ վերաբերում էր Ռուսաստանին – Ա. Հ.) հետ վաղուց ի վեր նախապատրաստված գործողությունների մասին է՝ թուրքական տերությունը տապալելու համար: Վանի իրադարձությունները հայտնի են»[26]:

Նմանատիպ բովանդակություն ունեն նաև ավստրո-հունգարական դիվանագիտական զեկուցագրերը: Դրանցից մեկում կարդում ենք, որ «ռուսական բանակի Ալաշկերտի դաշտավայրով առաջխաղացումը ամենայն հավանականությամբ ծառայելու է որպես ազդանշան Վանի վիլայեթում հայերի ապստամբության համար: Այդ գիտեին թուրքերը, ուստի և նրանք չատ խիստ զանգվածային միջոցներ են ձեռնարկել (խոսքը՝ հայերի կոտորածների մասին է – Ա. Հ.)»[27]:

Հար և նման է Իտալիայի արտաքին գործերի նախարար Սիդնեյ Կոնստանտինո Սոննինոյի 1915 թ. հուլիսի 19-ի հեռագիրը Վաշինգտոնում դեսպան Մաքքիին, որում մասնավորապես նշվում է. «Թալեաթի բեյը ... հայտարարել է, որ ստիպված է եղել միջոցներ ձեռնարկել հայկական շրջանակներում ուրվագծվող ապստամբությունը կանխելու համար»[28]:

Երիտթուրքերի կողմից հայկական կոտորածներն արդարացնելու նպատակադրությամբ գերմանական որոշ շրջաններում տարածվում էին նաև կեղծ ու սադրիչ լուրեր: Մասնավորապես, շրջանառվում էր այն տեղեկությունը, որ հայերը Վանում արդեն «դավադրություն էին կազմակերպել»[29]:

Ըստ մեկ այլ ապատեղեկատվության, որը գերմանացի ճանապարհորդները տարածեցին 1915 թ. հոկտեմբերին, հայերը, իբր, Վանում սպանել էին Թ. Ջևդեթին, ում դիակը «փողոցներուն մէջ քաշկռտած էին»[30]:

Վանի «ապստամբության» կանխամտածված լուրերի քողարկումը հաճախ առնչվում էր արևմտահայ քաղաքական գործիչների հակաթուրքական գործելակերպի հետ: Այսպես, Կ. Պոլսում Գերմանիայի դիխավոր հյուպատոս Յո. Հ. Մորգմանը 1915 թ. ապրիլի 28-ի իր զեկուցագրում հավաստիացնում էր, որ «Պաստերմաջյանին սպանել են, որովհետև նրա եղբայրը (խոսքը՝ Գարեգին Փաստրմաջյանի՝ Արմեն Գարոյի մասին է – Ա. Հ.) նախկին պատգամավոր, Վանի վիլայեթում սադրիչ գործողություններ է կազմակերպել ռուսների օգտին»[31]:

Ռայքսկանցլեր Բեթման Հոլվեգին հասցեագրած 1915 թ. մայիսի 23-ի հեռագրում դեսպան Վանգենհայմը հայտնում էր, որ «Վանի հայտնի դեպքերը հայ հեղափոխականների գործն է ... Պետք է ավելացնեմ նաև, որ այս օրերին երկու պատգամավոր էլ են ձերբակալված՝ Վարդեսը (Էրզրումի) և Զոհրապ էֆենդին

---

[26] *Գ ո ւ ս տ. 2008, 181:*

[27] *Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին (1915–1918 թթ.) (փաստաթղթերի ժողովածու). 2004, 15:*

[28] *Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին, 1913–1923 թթ., հ. Ա, 2008, 165:*

[29] *Տե՛ս* Документы французских архивов о геноциде армян. 1985, 24.

[30] *Պ ր ա յ ս. 1920, 107:*

[31] *Գ ո ւ ս տ. 2008, 170:*

(Ստամբուլ): Նրանց համարում են խիստ կասկածելի Վանի ապստամբության հետ»[32]:

Առանձնահատուկ ուշադրություն է դրավում կեղծիքի վրա հիմնված այն հաղորդագրությունը, թե ինչպես է Բարձր Դուռը Կ. Պոլսի գերմանական դեսպանությանը ներկայացրել Վանի «ապստամբության» ժամանակագրության իրեն ձեռնտու «գաղտնի» մեկնաբանությունը: Ուղարկված տեղեկություններն այսպիսին էին. «24-ը ապրիլի. պետբանկի և հեռագրատան շենքերը հօդս են թռել, փողոցային կռիվներ, 20 սպանված: 27-ը ապրիլի. Վանի խռովությունը ճնշված է: Քրդերը մասնակցում էին ապստամբությանը: Սպանված է 400 հայ, մնացածները փախել են Ռուսաստան: 6-ը մայիսի. նոր կռիվներ Վանում, թուրքական կողմից 600 մարդկային կորուստ: 9-ը մայիսի. հուզումները Վանում շարունակվում են: Թուրքերից՝ 1000, հայերից՝ 3000 սպանվածներ»[33]:

Պարզից էլ պարզ երևում է, որ երկու կողմերի կորուստների թիվը միտումնավոր աճում է թուրքական՝ 20-ից հասնելով 400-ի, հետո՝ 600-ի, իսկ հետո՝ 4000-ի: Սակայն Վանի չորսշաբաթյա հերոսամարտի ընթացքում՝ ապրիլի 20-ից մինչև մայիսի 17-ը, հայերն իրականում տվել էին ընդամենը 18 սպանված, իսկ թուրքերից հազիվ թե ավելի շատ մարդիկ զոհված լինեին[34]:

Այս փաստարկների անհերքելիությունը չի վրիպել ո՛չ ավստրո-հունգարական և ո՛չ էլ գերմանական դիվանագիտական անձնակազմերի ուշադրությունից, ըստ որի՝ «այդ մեղադրանքների մեջ տեղ են գտել հավանաբար չափազանցություններ»[35]: Իսկ ըստ Մ. Է. Ֆոն Շոյբներ-Ռիխտերի և Հ. Ֆոն Վանգենհայմի հավաստման (1915 թ. ապրիլի 30-ի հեռագիրն ուղղված ռայխսկանցլեր Բեթման-Հոլվեգին)՝ խռովությունների մասին այդ պնդումն անգամ Թալեաթ բեյը համարել է անհիմն[36]:

Այդ դեպքում հարց է ծագում, թե ի՞նչ նպատակ էին հետապնդում թուրքական իշխանությունների կողմից ներկայացված երկկողմանի կորուստների ուռճացված չափազանցությունները, չէ որ Վանի նահանգապետ Թ. Ջևդեթը, անկասկած, իր անմերձդի Օսմանյան Թուրքիայի ռազմական նախարար Էնվերին պարբերաբար իրազեկում էր կատարված իրական դեպքերի մասին: Բանն այն էր, որ նրանք ցանկանում էին գերմանական դեսպանությանն «ապացուցել», որ իրավիճակը, իրոք, օրհասական էր Վանում, որ ամեն ինչ դրված էր խաղաքարտերի վրա, և որ Օսմանյան կայսրության հետագա գոյությանը սպառնում էր հայերի հույժ վտանգավոր Վանի «ապստամբությունը»:

Վանի «ապստամբության» վերաբերյալ Անտանտի երկրների դիվանագիտական մոտեցումները

Սաղրիչ և ապակողմնորոշիչ վկայություններից, տարօրինակ է, բայց փաստ է, զերծ չէր նաև ամերիկյան, ֆրանսիական և ռուսական դիվանագիտական

---

[32] *Գ ո ւ ս տ. 2008, 183:*

[33] *Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2006, 24–25:*

[34] *Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2006, 25:*

[35] *Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին (1915–1918 թթ.) (փաստաթղթերի ժողովածու). 2004, 17–18:*

[36] *Տե՛ս Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2006, 162, 165:*

լրատվությունը: Այսպես, Կ. Պոլսում ԱՄՆ դեսպան Հ. Մորգենթաուն, իրական համարելով «հայ-անգլիական խոռվության» հավանականությունը, 1915 թ. ապրիլի 30-ին ԱՄՆ պետքարտուղարին ուղղված նամակում նշում էր, որ, իբր, Թ. Ջևդեթն իր նստավայր Վանում վիրավորվել էր հայ ահաբեկիչների կողմից և մահացել ստացած վերքերից, և որ դատական ատյանը հայերի «խռովությունները» ճնշելու որոշում էր կայացրել[37]:

Նմանատիպ կարծիք էր հայտնում նաև Սալոնիկում ֆրանսիական հյուպատոս Սեռնը՝ արտգործնախարար Թեոֆիլ Դելկասեին հասցեագրված 1915 թ. մայիսի 8-ի իր հեռագրում, որտեղ հիմք ընդունելով Կ. Պոլսից ժամանող ճանապարհորդների տեղեկությունները՝ նշում էր. «Վանում հայերը պետք է ապստամբած լինեն և կոտորած աստիճանավորներին ու մահմեդականներին ... Այս իրադարձություններին պետք է հաջորդած լինի 2800 հայերի ձերբակալությունը Կոստանդնապոլսում, որոնց թվում կան բազմաթիվ երևելի անձինք»[38]:

Մեծ Բրիտանիայում Ռուսաստանի դեսպան Ա. Բենկենդորֆը, որպես հիմնավորում ընդունելով 1915 թ. մայիսի 12-ին Սալոնիկից ստացված ֆրանսիական հեռագրի հաղորդագրությունը, չտապում էր իրազեկել Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովին, որ «հայերը գրավել են Վանը, հրկիզել են իշխանատունը, ավերել քաղաքը, որից հետո թուրքերը այն նորից գրավել են և դրանից հետո ջարդեր են տեղի ունեցել»[39]:

Իսկ ամերիկացի միջազգայնագետ և իրավաբան Հ. Ա. Գիբբոնսը, 1915 թ. անդրադառնալով Վանի «ապստամբության» խնդրին, նկատում է, որ թուրքերը՝ բացառությամբ Վանի, ոչ մի տեղ նվազագույն հիմքեր չունեին անգամ կասկածելու, որ հայերի ինքնապաշտպանության փորձերը համաձայնեցված չէին թշնամու գործողությունների հետ[40]:

Վանի «ապստամբության» թուրքական փաստարկի ժխտելիությունը

Կոտորածի թուրքական տրամաբանությունն այն է, որ եթե հայերը հանդգնել էին ապստամբել, ապա դրա դիմաց նրանք տեղահանվել են և բնաջնջվել: Դեռևս 1918 թ. Ստամբուլում հրատարակվող թուրքական «Թյուրքչե Իստանբուլ» թերթը գրում էր, որ «մեր՝ թուրքերիս կողմից առաջ քաշված պատճառաբանությունները, համաձայն որոնց Վանում հայերն են մեր վրա նախահարձակ եղել, և որ մենք Անատոլիայում փոխվրեժի դիմեցինք», գոհացում կարող է տալ միայն նրանց, ովքեր «զգացմունքայնությամբ» և ոչ գիտական ու իրավական տրամաբանությամբ են գործում[41]:

---

[37] *Տե՛ս* Genocide: Crime against Humanity.– Special Issue of the “Armenian Review”. 1984, 63; *նաև՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915–1916 թթ. Հայոց ցեղասպանության մասին. 2002, 28:*

[38] *Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918). 2005, 89:*

[39] Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств. 1878–1917 гг. 1931–1940, 416–417.

[40] *Գիբբոնս. 2003, 20:*

[41] *Տե՛ս Պողոսյան. 2011, 320:*

Բ. Դռան կողմից ներկայացված տեղեկագրերի համաձայն՝ Օսմանյան կայսրության տարածքում հայերի ինքնապաշտպանական մարտեր հիմնականում տեղի են ունեցել Արևմտյան Հայաստանի և կայսրության հայաբնակ վեց վայրերում և վեց տարբեր ժամանակահատվածներում. այն է՝ Մուշում (1915 թ. մարտի սկզբներին), Զեյթունում (1915 թ. մարտի 25-ին), Վանում (1915 թ. ապրիլի 20-ին), Շապին Գարահիսարում (1915 թ. հուլիսի 3-ին), Սուետիայում (1915 թ. հուլիսի 30-ին) և Ուրֆայում (1915 թ. հոկտեմբերի 1-ին): Կարծում ենք, որ Վանի «ապստամբության» մեղադրանքի ողջ սնանկությունը բացահայտելու համար արևմտահայերի 1915 թ. ինքնապաշտպանական մարտերի հետ անհրաժեշտ է նախևառաջ տարբերակել այն եղելությունը, թե հայերի «ապստամբությունները» տեղի են ունեցել արևմտահայության տեղահանություններից առա՞ջ, տեղահանությունների ընթացքո՞ւմ, թե՞ տեղահանություններից հետո:

Ըստ իտալական դիվանագիտական փաստաթղթերի՝ տեղահանություններից առաջ «ապստամբություններ» տեղի են ունեցել միայն Մուշում, Զեյթունում և Վանում: Սակայն Զեյթունի, ինչպես նաև Մուշի պարագայում խոսքը ոչ թե «ապստամբությունների», այլ՝ ժանդարմների և դասալիքների միջև անհաղորդ ընդհարումների մասին է, որոնք հատկանշական են եղել նաև նախորդ խաղաղ ժամանակներում[42]: Շապին Գարահիսարում, Սուետիայում և Ուրֆայում տեղի ունեցած հերոսամարտերի ժամանակագրական հաջորդականությունը ցույց է տալիս, որ դրանք տեղի են ունեցել Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչության տեղահանություններից հետո:

Ինչ վերաբերում է Վանի «ապստամբությանը», ապա, կարծում ենք, որ այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել այն կարևոր հանգամանքը, որ հայկական կոտորածները Վանի նահանգում սկսել են ոչ թե Կ. Պոլսի «դավադրությունից», Վանի 1915 թ. «ապստամբությունից» և արևմտահայ խաղաղ ազգաբնակչության տեղահանություններից հետո, այլ՝ Վանի 1915 թ. դեպքերից ամիսներ առաջ՝ 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբերին, երբ Վանի նահանգի՝ Ախռիկ, Հասան-Թամրան, Խարաբասորիկ, Հազարեն, Ավզարակ գյուղերում իրականացվել էին հայկական կոտորածներ, «երբ Վանայ դիպաց պատրուակ ալ չկար»[43]: «Ապստամբության» ժխտելիության հայեցակարգային առաջնային փաստարկն այն է, որ վանեցիների «ապստամբությունը», ինչպես արխիվային փաստաթղթերից մեկում է նշվում, պայմանավորված էր հայերի պարբերական հետապնդումներով, որոնք չէին թաքցնում իրենց համակրանքը Ռուսաստանի ու դաշնակիցների նկատմամբ[44], և ինչպես հայ լրագրող, հրապարակագիր և հասարակական գործիչ Ա. Անտոնյանն է նկատում՝ « ... կառավարությիւնը «տեղական» գոյն տուած էր, եւ ամէն ճիգ կ՚ընէր հայ ժողովուրդը ապահովցնելու թէ իրեն դեմ ոչինչ կը նկրտուի»[45]:

Իրողություն է նաև այն, որ հայ կամավորական ջոկատները 1914 թ. աշնանը Երևանից դեռ դուրս չէին եկել, երբ սկսեցին կոտորածներ Օլթիի, Արտանուշի և Արդվինի հայկական 1.276 (ըստ Լեփսիուսի՝ 7000) գյուղերում: Թուրքական

---

[42] *Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրություններում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու. 1991, 30:*

[43] *Տ ա շ ե ա ն. 1921, 11:*

[44] *Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 1267, ց. 1, գ. 6, թ. 4:*

[45] *Ա ն տ ո ն ե ա ն. 1921, 129:*

կառավարության հրամանով կոտորվեցին ու կողոպտվեցին նաև Ալաշկերտի, Դիադինի ու Բայազետի շրջանների հայկական 50 գյուղերի բնակիչները[46]:

Ինչ վերաբերում է ռուսական սահմանամերձ գոտուց բավականին հեռու՝ Կարինի, Աղանայի, Հալեպի նահանգների և Զեյթունի հայերի զանգվածային ձերբակալություններին ու տեղահանություններին, ապա դրանք սկսվել էին Վանի 1915 թ. ապրիլյան դեպքերից էլ առաջ՝ 1915 թ. մարտին: Այդ են վկայում նույնիսկ գերմանական աղբյուրները, որոնք Հայոց ցեղասպանությունը ժամանակագրորեն բաժանում են չորս շրջափուլի, որոնցից առաջին շրջանն ընդգրկում է 1914 թ. նոյեմբերի 1-ից (Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո) 1915 թ. ապրիլի 20-ը (հին տոմար)՝ մինչև Վանի դեպքերը[47]: Այսինքն, ակամայից փաստվում է այն ճշմարտությունը, որ նոյեմբերի 1-ից՝ ավելի քան հինգուկես ամիս հետո սկզբնավորված Վանի «ապստամբությունը» կարող էր ընդամենը պատրվակ դառնալ երիտթուրքերի կողմից Հայոց ցեղասպանության իրագործման համար: Հետևաբար, այն կոտորածների ոչ թե պատճառն էր, այլ՝ առիթը:

Վանի «ապստամբության» թուրքական տեսակետի առաջին հակազդողներից մեկը՝ Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Սազոնովն էր, որը Լոնդոնում Ռուսաստանի դեսպանին ուղղված 1915 թ. մայիսի 1-ի հեռագրում վստահություն էր հայտնում, որ Վանի հայերի «ապստամբությունը» հարուցել է կոտորածը և ոչ թե հակառակը, որովհետև հայերի համար իմաստ չուներ մինչև ռուսական զորքերի Վան ալշավելը չարժում սկսել թուրքերի դերակշիռ ուժերի դեմ[48]: Համանման լուսանգակություն ուներ նաև Փարիզում Ռուսաստանի դեսպանատան 1915 թ. մայիսի 15-ի հայտարարությունն այն մասին, որ Ս. Սազոնովը ժխտել է Սալոնիկում Ֆրանսիայի հյուպատոսի այն կարծիքը, թե հայերի կոտորածները կազմակերպվել են որպես պատասխան Վանում և Զեյթունում նրանց ապստամբության[49]:

Հետաքրքրական է հատկապես Ֆրանսիայի արտգործնախարարությանն ուղղված Փարիզում Ռուսաստանի դեսպան Ալ. Իզվոլսկու 1915 թ. մայիսի 15-ի հաղորդագրությունը, որի մեջ նշվում էր. «Կարելի է կասկածներ չտածել, որ կոտորածներն են տեղիք տվել հայերի ապստամբությանը Վանում և ոչ թե այդ կոտորածներն են հաջորդել ապստամբությանը, որովհետև ողջամտությանն անհարիր կլիներ, եթե հայերը ձեռնամուխ լինեին քրդերի ու թուրքերի գերակշռող ուժերի դեմ ուղղված գործողությունների, առանց նախապես հաշվի առնելու ռուսական զորքերի ժամանման հանգամանքը»[50]:

Այդ մասին են փաստում նաև դիվանագիտական բնույթի այլ հեռագրեր: Այսպես, Լոնդոնում Ռուսաստանի դեսպան Բենկենդորֆն արտաքին գործերի նախարար Սազոնովին ուղղված 1915 թ. մայիսի 20-ի թիվ 352 հեռագրում նշում է. «... երբ ես նրան (խոսքը Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարար է. Գրեյի մասին է – Ա. Հ.) ասացի, որ Վանում այսպես կոչված ապստամբության

---

[46] Տե՛ս Ակուն ի. 1920, 34:

[47] Տե՛ս Геноцид армян перед судом. Судебный процесс Талаата паши. Стенографический отчет. 2007, 31.

[48] Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. փաստաթղթերի և նյութերի ժողովածու. 1991, 340:

[49] Տե՛ս Документы французских архивов о геноциде армян. 1985, 9–10.

[50] Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918). 2005, 93:

փաստը չի կարող ընդունվել ի գիտությունն, քանի որ այն ակնհայտորեն հետևել է ջարդին, Գրեյը ոչինչ չառարկեց դրան»[51]:

Յո. Լեփսիուսը Վանի «ապստամբությունը» համարում է ինքնապաշտպանական մի գործողություն, առանձնահատուկ մի դրվագ հայոց կոտորածների պատմության մեջ և ոչ թե դավաճանություն երկրի հանդեպ, քանի որ հայերն օրինապահ էին մնացել մինչև այն պահը, երբ նրանք Վանում դիմադրություն էին կազմակերպել՝ իշխանություններին թույլ չտալով, որ իրենց սրի քաշեին իբրև «վնասակար և վտանգավոր» տարրի՝ հանուն օսմանյան հայրենիքի բարօրության ու անվտանգության[52]: Յո. Լեփսիուսը բարձրաձայնում է նաև, որ ձերբակալությունների և Վանի իրադարձությունների միջև իրականում ոչ մի կապ չհաստատվեց[53]:

Ժամանակին հայկական «խռովությունների» մասին թուրքական «պատճառաբանությունը» հիմնովին ժխտել է նաև Կարինում Գերմանիայի հյուպատոս Շոյքներ-Ռիխտերը, որն իր բարոյական պարտքն է համարել ցույց տալ, որ հայկական ընդհանուր խռովության մասին ապացույցներ չկան: Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Է. ֆոն Հոհենլոհե-Լանգենբուրգին ուղղված 1915 թ. օգոստոսի 5-ի նամակում նա հաստատում է, որ «ընդհանրապես հայերի մտադրված և նախապատրաստված ապստամբության վերաբերյալ, ըստ իս, ոչ մի ապացույց չկա»[54]: Դեսպանին տեղեկացնելով, որ Էրզրումի նահանգում իշխանությունները չեն հայտնաբերել ոչ զենք, ոչ էլ հայերին անվանարկող որևէ փաստաթուղթ՝ նա եզրակացնում է, որ եթե այնտեղ խռովություն ծրագրվեր, ապա այն կիրականացվեր 1915 թ. հունվարին, որն ամենահարմար պահն էր, «երբ ռուսները կանգնած էին Էրզրումից 35 կմ հեռավորության վրա և ժանդարմերիան Էրզրումում կազմված էր ընդամենը մի քանի հարյուր մարդուց, այն դեպքում, երբ Էրզրումի միայն աշխատանքային գումարտակներում ընդգրկված էին 3–4 հազար հայեր (ընդգծումը մերն է – Ա. Հ.)»[55]:

Իրավացի է նաև Ա. Մանդելշտամը, երբ հավաստում է, որ թուրքական կառավարության ստահոդ հայտարարություններին հակառակ՝ Վանում ոչ մի հայկական խռովություն կամ հեղափոխություն չէր եղել: Հայերը զենքի դիմեցին միայն այն ժամանակ, երբ տեսան կոտորածի սպառնալիքը՝ իրենց կյանքը ենթարկելով հնարավորինս թանկ վաճառելու բնական ցանկության: Վանում նրանք զենքի դիմեցին միայն շրջակա գյուղերի բնակչության մեծ մասի կոտորածներից և նահանգապետ Ջևդեթ բեյի հրամանով իրենց անվանի չատ քաղաքացիների դավաճանական սպանություններից հետո, երբ նա իրենց թաղերը շրջապատել էր խրամատներով: Ռազմական գործողությունները սկսել էին թուրքերը, որոնք, սակայն, չէին կարողացել գրավել հայկական դիրքերը և 1915 թ.

---

[51] *Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության փաստաթղթերը Հայոց 1915–1916 թթ. ցեղասպանության մասին. 2004, 26, նաև՝ Հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում (1915–1918 թթ.), օտարերկրյա պետությունների դիվանագիտական փաստաթղթերի վկայությունները, փաստաթղթերի ժողովածու. 2011, 181:*

[52] *Տե՛ս Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2008, 316:*

[53] *Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2006, 29:*

[54] *Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2008. 245:*

[55] Армянский вопрос и Геноцид армян в Турции. Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. 1995, 455.

մայիսի 20-ին դադարեցրել էին պաշարումը ռուսների մոտենալու պատճառով[56]:

Վանի «ապստամբության» ժխտելիության մասին համոզիչ մեկնաբանություն է տվել Կ. Պոլսում Ավստրո-Հունգարիայի դիվանագիտական կցորդ, գեներալ-մայոր Յո. Պոմիանկովսկին իր «Օսմանյան կայսրության անկումը» գրքում, որտեղ գրում է. «Ապստամբությունները Զեյթունն և Վան քաղաքներում տեղի հայերի հուսահատ գործողություններն էին, որոնք տեսան, որ սկսել է համընդհանուր սպանդ ու մոտ ապագայում իրենց հերթին էլ է գալու»[57]: Եվ դա, իրոք, այդպես էր, քանի որ իթթիհատը լուրջ վտանգ էր տեսնում ռուսական սահմանի մոտ ապրող Վանի նահանգի 192.000 հայության մեջ[58]:

Անդրադառնալով Վանի «հեղափոխության»-ը (խոսքը Վանի 1915 թ. ապրիլյան հերոսամարտի մասին է –Ա. Հ.)՝ Կ. Պոլսում ԱՄՆ-ի դեսպան Հ. Մորգենթաուն նկատում է. « ... ամէն անգամ որ Հայերու նպաստին կը դիմէի էնվերի, Թալէաթի եւ նմաններուն, անոնք անփոփոխելիօրէն կը յիշէին Վանի «յեղափոխականները», իբր օրինակ «դաւադրութեան»: Ինչպէս որ այս պատմութիւնը ցոյց կու տայ, այդ համբաւաւոր «յեղափոխութիւնը» ուրիշ բան չէր, բայց եթէ հայերու դիմադրութիւնը՝ միտքերնին դրած ըլլալով պաշտպանել իրենց կիներուն պատիւը եւ իրենց կեանքը, երբ թիւրքերը իրենց դրացիներէն հազարատորներ ջարդելով՝ ցուցուցած էին, թէ ի՛նչ ճակատագիր կը սպասէր իրենց»[59]: Հետևաբար, Վանի «ապստամբությունը», ըստ Հ. Մորգենթաուի, ընդամենը «բացառություն» էր և «հուսահատ» դեպք[60]:

Իրավացի է լորդ Ջ. Բրայսը, թե Վանի «ապստամբություն» «ըստածը օրինական ինքնապաշտպանութեան արարք մը եղաւ եւ ջարդերու պատմութեան մէկ դրուագը, եւ երբեք դաւաճանութիւն մը»[61]:

Վանի «ապստամբության» խնդրի հստակեցման գործում որոշակի հետաքրքրություն են ներկայացնում միսիոներների հաղորդած վկայությունները: Վանի ամերիկացի միսիոներները վստահում են, որ «Հայերը, տեսնելէ ետք, թէ ինչեր կը կատարուին չրջաններու մէջ, լոկ ինքնապաշտպանութեան էին դիմած»[62]:

Արևմտյան Հայաստանում գործունեություն ծավալած կաթոլիկական քահանա է. Շտիրը համոզմունք է հայտնում, որ Վանի և Զեյթունի ապստամբությունները եղել են սոսկ ինքնապաշտպանական միջոցառումներ[63]: Իսկ չվեդ միսիոներուհի Ա. Յուհանսոնը վստահ է, որ Վանի «ապստամբությունը» պայմանավորված է եղել կոտորածին չենթակվելու անհրաժեշտությամբ[64]:

Վանի «ապստամբության» խնդրի պարզաբանմանը հանգամանորեն անդրադարձ են կատարել պարսիկ ու արաբ հեղինակները, որոնք անաչառորեն

---

[56] Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու. 1991, 590:

[57] Pomiankowski, 1928, 160; նաև՝ Օհանջանյան. 1997, 88:

[58] Վանի նահանգի բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 542.000 (տե՛ս Ակուն. 1920, 34):

[59] Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի յիշատակները եւ հայկական եղեռնին գաղտնիքները. 1919, 249:

[60] Տե՛ս Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915–1916 թթ. Հայոց ցեղասպանության մասին. 2002, 13:

[61] Պրայս. 1920, 107:

[62] Շիրակեան. 1991, 44:

[63] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 457, ց. 1, գ. 2, թ. 4:

[64] Յուհաննսոն. 2008, 41–42:

հանգել են արդարամիտ եզրակացությունների: Խոսելով Դարդանելի ռազմական գործողությանը[65] Վանի հայության ունեցած «մասնակցության» մասին՝ պարսիկ պատմաբան և գրող Ի. Ռայինը նկատում է, որ Անատոլիան Կովկասյան ռազմաճակատից և Դարդանելից հավասարաչափ հեռու է և պատերազմի տարիներին դաշնակիցների հետ համագործակցության հնարավորությունն ընդհանրապես չկար, ուստի նրանց կողմից Վանում ապստամբության դրոշ բարձրացնելը բացառվում էր, որովհետև «հայերը չունեին կազմակերպված համայնքներ և լայնատարած երկրով մեկ ապրում էին սփռված ու փոքրաթիվ խմբերով»[66]: Մեկ այլ պարսիկ հեղինակ՝ Բ. Էֆթեխարին, փաստում է, որ երիտթուրքերը, տեսնելով իրենց համար ստեղծված հույժ վտանգավոր իրավիճակը, որոշեցին հայերի նկատմամբ բռնություններ կիրառելով չեզոքացնել հասարակական կարծիքը[67]:

Եգիպտացի պատմաբան և իրավաբան Ֆուադ Հասան Հաֆիզը գտնում է, որ Վանում օսմանյան պետության դեմ ոչ մի ապստամբություն էլ տեղի չի ունեցել, քանի որ դրանից ամիսներ առաջ Ջևդեթի կողմից հայկական ջարդեր էին իրականացրել Ուրմիա քաղաքում՝ 1915 թ. հունվարի 2-ին քաղաքի թուրքական առաջին գրավումից հետո[68]: Շարունակելով Հաֆիզի միտքը՝ սիրիացի լրագրող և հեղինակ Ս. Արբաշը կատարում է հետաքրքիր համեմատություն և նշում, որ 1915 թ. փետրվարին Ուրմիայում ոչնչացվեցին հայեր՝ կանայք, երեխաներ և տղամարդիկ: Սակայն այդ առիթով թուրք հեղինակների մոտ չկա անգամ որևէ ակնարկ Ուրմիայի հայերի «ապստամբության» մասին: Հետևաբար, Ուրմիայում օսմանյան զորքերի իրականացրած հայերի կոտորածները գալիս են ոչ միայն հերքելու հայերի ապստամբության և դավաճանության վերաբերյալ թուրքական «տեսակետի» անհեթեթությունը, այլև հաստատում են հայերի ջարդերի կանխապես ծրագրված լինելը[69]:

Արաբ գործիչ, Խարբերդի գավառի նախկին կառավարիչ և Մեծ եղեռնի ականատես Ջայեդ էլ-Ղոսեյնը հաստատում է, որ կառավարությունը Վանի հայերից պահանջել է հանձնել զենքերը: Սակայն վերջիններս, վախենալով քրդերից և կառավարությունից, հրաժարվել են կատարել այդ պահանջը[70]:

Եգիպտացի պատմաբան Մ. Ռիֆաաթ ալ-Իմամը, խոսելով Վանի դեպքերի մասին, եզրակացնում է՝ անկախ այն բանից, թե ինչ է տեղի ունեցել Վանում, կարևորն այն է, որ այն ապստամբություն չէր, այլ՝ զինված պաշտպանական գործողություն՝ դիմակայելու թուրքական պաշարմանը[71]:

Լիբանանցի պատմաբան, քաղաքական և մշակութային գործիչ Մուսա Պրենսը նույնպես անհիմն է համարում հայերի «ապստամբության» թուրքական վարկածը՝ գտնելով, որ Վանում հայկական ապստամբություն ամենևին էլ

---

[65] *Դարդանելի-1 (1915 թ. փետրվարի 19 – մարտի 18) և Դարդանելի-2 (1915 թ. ապրիլի 25 – 1916 թ. հունվարի 9) ռազմական գործողությունները, ի վերջո, ավարտվեցին գերմանա-թուրքական միացյալ ուժերի հաղթանակով (տե՛ս Հ ա յ ր ու թ յ ու ն յ ա ն. 1983, 191–192):*

[66] *Ռ ա յ ի ն. 1999, 93–94:*

[67] *Տե՛ս Բ ե գ ի ջ ա ն յ ա ն. 2011, 108:*

[68] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2024, 141–142:*

[69] *Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2024, 142:*

[70] F â ' i z E l-G h u s e i n (Bedouin Notable of Damascus). 1917, 51.

[71] *Տե՛ս Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 2024, 147:*

տեղի չի ունեցել: Նա համոզմունք է հայտնում, որ Վանի նահանգի հայ բնակչության ջարդերը սկիզբ առան այն ժամանակ, երբ կուսակալ Ջևդեթի հրամանով թուրքական զորքը պաշարեց Վանի հայկական թաղամասերը, իսկ հայերը, հասկանալով թուրքերի մտադրությունները, հերոսաբար դիմադրեցին՝ իրականացնելով օրինավոր պաշտպանություն[72]:

Կարևոր մի հանգամանք ևս. վանեցիները ինքնապաշտպանություն էին կազմակերպել մինչև ռուսական զորքերի մուտքը Վան՝ չունենալով ստույգ տեղեկություններ նույնիսկ նրանց չարժընթացի վերաբերյալ: Հետևաբար, չէր կարող խոսք անգամ լինել «ներխուժած թշնամու» հետ համատեղ գործողություններ իրականացնելու մասին[73]: Երբ ռուսական բանակի հրամանատար, գեներալ-մայոր Ալ. Նիկոլաևը իր զորքով մտնում է Վան, Վանի հերոսամարտի ղեկավարներից Ա. Մանուկյանն իր ողջույնի խոսքում ասում է. «Երբ ասկից ամիս մը առաջ զէնք առինք, հաշուի չէինք առած ռուսերու ժամանումը: Մեր կացութիւնը յուսահատական էր այն ատեն: Ընտրելու մէկ բան միայն կը մնար մեզի համար. կա՛մ անձնատուր ըլլալ եւ թողուլ որ խողխողեն մեզ իբր ոչխար, կա՛մ մեռնիլ զէն ի ձեռին կռուելով: Այս վերջինը նախընտրեցինք»[74]:

Եթե Վանի հայերը, իրոք, գործում էին ռուսների գաղտնի հրահանգով և ցուցումներով, ապա Վանում հայերի դեմ կռված թուրքական բանակի սպա, ծագումով վենետուելացի հրետանավոր Ռաֆայել դե Նոգալեսը չէր քննադատի նրանց՝ ասելով.« ... եթե Վանում շրջափակված հազարավոր հայերը չստեղծեին զինվորական նվագախմբեր, չզբաղվեին ժամանակավոր կառավարությունների ձևավորմամբ և չպատրաստեին մեղալներ ու զինվորական խաչեր, այլ դրա փոխարեն անցնեին հարձակման՝ զինված մահակներով, կացիններով և դանակներով և փորձեին մեր վրա թափվել ամբողջ կուլտով, ո՛վ գիտի, միգուցե նրանք վերջնական հաշվարկով գլխովին ջախջախեին մեզ կամ էլ ստիպեին մեզ նահանջել Բիթլիսի նահանգ»[75]:

Կարծում ենք, որ Վանի նահանգի հայերը ուրիշ տարբերակ չունեին, բացի իրենց կյանքը փրկելու համար ինքնապաշտպանության դիմելուց. այլապես արժանանալու էին մյուս նահանգների իրենց ազգակիցների ճակատագրին: Երիտթուրք ղեկավարները, ինչպես մինչև պատերազմի սկիզբը, այնպես էլ պատերազմի ընթացքում, մտահոգ էին հայերի «ապստամբության» մշտական վախով, որն ահագնացավ հատկապես 1915 թ. սկզբներին ռուսներից ու բրիտանացիներից կրած ռազմական մի շարք պարտություններից և թուրքերի կողմից ռուսների վրա հակահարձակման հնարավորության բացառումից հետո: Պաշտպանվելու համար օսմանյան պետության թիկունքը պետք է լիներ ամուր և անխոցելի, իսկ քանի դեռ հայերը գոյություն ունեին, որոնց թուրքերը չէին վստահում, պաշտպանվելու մասին անգամ խոսք լինել չէր կարող: Այս առումով դիպուկ է Կ. Սոլախյանի կարծիքն այն մասին, որ իշխանությունները սպանդի

---

[72] Prince. 1967, 34.

[73] *Տե՛ս* Армянский вопрос и геноцид армян в Турции. Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. 1995, 19.

[74] *Գաղտնի տեղեկագիր Տօքթ. Եօհաննէս Լեփսիուսի (նախագահ գերման Մօտաւոր Արեւելքի Միսիոնին եւ Գերման եւ հայկական ընկերութեան). Հայաստանի ջարդերը. 1919, 106:*

[75] Де Ногалес. 2006, 64–65.

մոլուցքի մեջ այնքան առաջ էին գնացել, որ Վանի հայության հետ հաշտության եզր գտնելու հնարավորություն չէր մնացել[76]:

Դրա համար էլ երիտթուրքերը, սկսած 1914 թ. օգոստոսի վերջից, պարբերաբար «հետապոտում» էին հայոց «ապստամբության» իրական հավանականությունը: Այդ նպատակով նրանք նահանգային պաշտոնյաներին ուղարկեցին հարցումների որոշակի ցանկ, որոնց պատասխանները զարմանալիորեն նման էին այն առումով, որ ամենևին էլ չէին ահազանգում ապստամբության կամ պետության անվտանգությանը սպառնացող որևէ վտանգի մասին: Թուրք պատմաբան և հասարակագետ Թ. Աքչամը, ուսումնասիրելով Թուրքիայի վարչապետարանի արխիվի փաստաթղթերը, ներկայացնում է Վանի նահանգապետ Հ. Թահսին բեյի 1914 թ. օգոստոսի 25-ի զեկույցը: Նահանգապետը նշում էր. «... ո՛չ մինչև ընդհանուր զորահավաքը, ո՛չ դրանից հետո հայ բնակչության մեջ որևէ մարդ չի եղել, որը գաղթած լինի Իրան, կամ փախած [իր տնից]: Տեղի հայերի մեջ ո՛չ խռովության, ո՛չ էլ նույնիսկ կառավարության հանդեպ ընդդիմության մտքեր կան ... Ընդհակառակը, ընդհանուր զորահավաքի և պատերազմի կապակցությամբ դաշնակիների մեջ կարելի է տեսնել բարձրաձայն աջակցություն և օժանդակության [վերաբերմունք] կառավարության հանդեպ»[77]: Ի դեպ, զեկուցելու արժանի միակ դիտարկումը նահանգապետը համարել է այն, որ «մասնավոր ակումբներում, որտեղ հանդիպում են երիտասարդ հայ առևտրականներն ու ղեկավարները, խոսում են, որ չեն ուզում, որ ռուսները պարտություն կրեն գերմանացիներից, և որ հայկական բարենորոգումների [հարցը] կարող է առաջ գնալ [միայն], եթե Ռուսաստանը Եվրոպայում գերիշխող դառնա»: Հ. Թահսինը եզրափակում է՝ ասելով. «Բացի այդ համառ ցանկություններից, հայերի մեջ ոչ մի ջանք չկա քայլ անելու դեպի [քաղաքական կամ ռազմական] որևէ գործողություն»[78]:

Ալեքսանդրետում Գերմանիայի փոխհյուպատոս Հերման Հոֆման-Ֆեղքերզամպը 1915 թ. նոյեմբերի 8-ին հայտնում էր. «Այլ է խնդիրը, երբ հայերի բռնագաղթեցումը կապում են այն երկյուղի հետ, որ իբր թե թշնամու ներխուժման պարագայում հայերը, ինչպես Վանում էր, կարող են հանդես գալ թշնամու հետ համատեղ: Այդ երկյուղն անկասկած հիմնավորված կլիներ, եթե այն վերաբերեր ոչ միայն հայերին, այլ նաև Թուրքիայի մյուս քրիստոնյաներին և անգամ շատ մահմեդականների, ինչպես բեդերան կուսակցության քրդերին և Իրաքի ու Արաբիայի արաբական նշանավոր խոշոր ցեղերին»[79]:

Կարծում ենք, որ վերոնշյալ ներկայացված փաստերի պարզ համադրությունը բերում է այն համոզման, որ եթե թուրքերը բավականաչափ զորք ունենային ռուսական առաջխաղացումը Հյուսիսային Պարսկաստանում և Վանի նահանգի հյուսիսարևելյան շրջաններում կանգնեցնելու համար, ապա հայերի նկատմամբ առաջ քաշված «ապստամբության» մեղադրանքի կծիկը, հավանաբար, որևէ կարևորություն չպետք է ստանար՝ պատերազմի ընդհանուր համատեքստում:

---

[76] *Տե՛ս Սոլախյան. 2000, 9:*

[77] *Ակտ. 2015, 213–214:*

[78] *Ակտ. 2015, 214:*

[79] Армянский вопрос и геноцид армян в Турции. Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. 1995, 291.

Սակայն դա ամենևին էլ արդարացում չէր, քանի որ Հայոց ցեղասպանության իրական պատճառը եղել է երիտթուրքերի միահեծան և իսլամական հիմունքների վրա կառուցված պանթուրքիզմի գավթողական ծրագրերը, որոնք մշակվել էին դեռևս 1911 թ. հոկտեմբերին Սալոնիկում կայացած «Միությունն և առաջադիմություն» կոմիտեի համաժողովում[80] և 1913 թ. սկսած վերածվել պետական քաղաքականության[81]:

1913–1914 թթ. հայկական բարենորոգումների նախագծերի պատճառով թուրքերն արդեն թշնամացել էին հայերի դեմ և մնում էր պատեհ առիթ, որ հայերին կոտորեին: Երբ 1915 թ. մայիսի 12-ին օսմանյան խորհրդարանի պատգամավոր Վարդգեսը (Հովհաննես Սերենգուլյան) անձամբ այցելում է Թալեաթին, ներքին գործերի նախարարն ակնարկում է, որ «մեր թուլության օրերին դուք բռնեցիք մեր կոկորդից և առաջադրեցիք բարեփոխումների հայկական հարցը: Դրա համար էլ մենք պետք է օգտագործենք բարեպատեհ իրավիճակը՝ ձեր ժողովրդին ցրելու համար»: «Գուցե երիտթուրքերը դրանով ուզում են չարունակել Աբդուլ Համիդի բնաջնջման գո՞րծը», – հարցնում է Վարդգեսը՝ սուլթանի դեմ համատեղ պայքարի ժամանակների բարեկամությամբ: Թալեաթը պատասխանում է՝ «այո»[82]:

«Հայության բնաջնջումի այս ծրագիրը, որ վաղուց հղացված էր, – նշում է Կ. Պոլսի Հայոց պատրիարք Զավեն արք. Եղիայանն ամերիկահայերի հոգևոր առաջնորդ ծ. վարդապետ Վահունուն գրած 1915 թ. դեկտեմբերի 28-ի նամակում, – գործադրության դրվեցավ պատրվակ բռնելով Վանա դեպքերը, կովկասի սահմանագլուխի վրա մերայնոց ըրած չարժումները և իբր թե ներքին գավառներու մեջ Հայոց ապստամբելու մտադրությունը՝ որուն համար գինված է եղեր կասեցնելու համար կարելի միջոցները գործադրվեցան մեր կողմե: Օսման. պետական անձնավորություններն հայտարարած էին, թե չպիտի թույլ տան, որ Հայաստան ալ եվրոպական նահանգներու նման ձեռքե ելնե»[83]:

Անկախ կամավորական խմբերի ստեղծումից, թուրքերն արդեն նպատակադրվել էին կոտորել հայերին՝ Հայկական հարցն այդ եղանակով լուծելու համար և այդ մասին արդեն հայտնի էր: Ինչպես Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպանատան թարգման Մ. Լեդուկն է նշում արտգործնախարար Մ. Դելկասեին ուղղված 1915 թ. ապրիլի 25-ի հեռագրում, « ... թուրքերը վախենում էին, որ նորից չծագի Հայկական հարցը», իսկ ապրիլի 29-ին հայտնում էր, որ թուրքերն «իբր ցանկացել են կասեցնել հայերի կողմից հնարավոր հեղաշրջման (խոսքը՝ ապստամբության մասին է – Ա. Հ.) փորձը»[84]: Երիտթուրքերը ստիպված էին խոստովանել, որ «բարենորոգումների հարցը վերջացած լինելու լուրը մեզ այնչափ էլ չէ խանդավառում, ինչպէս 1895 թ. հոկտեմբերին ...»[85]:

Վանի «ապստամբության» թուրքական վաստարկի ժխտելիության իրավական տեսանկյունից առկա է նաև մեկ ուրիշ համոզիչ հանգամանք ևս: Նույնիսկ

---

[80] Տե՛ս Լ ե փ ս ի ո ւ ս. 1916, 220:

[81] Ն ե ր ս ի ս յ ա ն. 1998, 103, Ն ե ր ս ի ս յ ա ն. 2005, 80–83:

[82] Գ ո ւ ս տ. 2002, 150:

[83] Ն ե ր ս ի ս յ ա ն. 1965, 94:

[84] Документы французских архивов о геноциде армян. 1985, 9.

[85] «Մշակ» (Թիֆլիս), 20. III. 1914:

եթե «ապստամբություն» էլ բռնկվեր Վանում, իթթիհատական կառավարությունը բարոյական որևէ իրավունք չուներ ցեղասպանության քաղաքականություն իրականացներ կայսրության մյուս վայրերի հայերի նկատմամբ: «Մշակ»-ի սեփական թղթակից Մտրակի (Վահան Մինախորյան – Ա. Հ.)՝ Վանից Թիֆլիս հասցեագրված 1915թ. հունիսի 23-ի նամակից ակնհայտ է, որ «... թիւրք կառավարութիւնը հայերին կոտորելու համար (խոսքը՝ Բիթլիսի կոտորածների մասին է – Ա. Հ.) նոյն պատրուակը չունէր, ինչ որ ունէր Վանում: Ջէվդէթը հայերին համարում էր ապստամբ, որովհետև բանակից դասալիք եղել և զինուր չէին տուել ընդհանրապէս...»[86]: Սակայն Բիթլիսի հայությունն առանց որևէ հիմնավորման ենթարկվեց զարզանդելի կոտորածների:

Եթե նույնիսկ որոշ հայեր օգնել էին ռուսներին և օսմանյան խորհրդարանի մի քանի հայ պատգամավորներ «ոճիրներ» էին գործել օսմանյան «հայրենիքի» հանդեպ, թուրքական կառավարության պարտականությունն էր ձերբակալել «ոճրագործներին» և նրանց՝ որպես օսմանյան պետության քաղաքացիներ պատժել: Համենայն դեպս, այդ է վկայում սուլթան Մուհամմեդ V-ին ուղղված Հռոմի Բենեդիկտոս XV պապի 1915 թ. սեպտեմբերի 10-ի նամակի այն հատվածը, որտեղ նա գրում է. «Եթէ հայերու մէջ դաւաճաններ եւ կամ յանցապարտներ գտնուին, թող անոնք օրինաւոր կերպով դատուին եւ պատժուին: Բայց, Ձեր Վեհափառութիւնը թող չթոյլատրէ, որ պատիժի ենթարկուին անմեղներ. Յանցապարտներուն հանդէպ ալ թող փայլի Ձեր ներողամտութիւնը»[87]:

Նմանատիպ մոտեցում է ցուցաբերում նաև Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը, երբ նկատում է. «Չեմ կրնար մեկնել որ Վանայ եղելութեան վրէժը Պրուսայէն կամ Նիկոմիդիայէն առնուի: Չեմ կրնար համոզուիլ որ ծեր ու տղայ, կին ու պառաւ հաւասարապէս պատուհասակոծ ըլլալու ենթարկուին: Չեմ կրնար հասկնալ որ յանկարծօրէն ամբողջ ժողովուրդներ տարագրութեան հանուին, կիներ ու այրեր իրարմէ զատուին եւ այրեր անծանօթ վայրերու եւ անկոխ ձորերու մէջ անհետանան: Չեմ կրնար բացատրել որ մանկամարդ կիներ, նորահաս աղջիկներ եւ անտիրական տղաներ կանանոցներու աւարաբաժին տրուին»[88]:

Այդ մասին է փաստում նաև «Թյուրքչե Իստանբուլ» թերթը, երբ նշում է. «Վանում կեղեքիչ ոճիրներ գործեցին մի քանի անհատներ, և կառավարական ուժը պարտավոր էր բնաջնջել միայն այս ոճիրների հեղինակներին, մինչդեռ մեր կառավարությունը որոշեց ջարդեր կատարել, մորթել տվեց մարդկային զանգվածներին, կողոպտել տվեց նրանց ունեցվածքը և հրապարակեց լքյալ գույքի օրենքը, այսինքն՝ բռնագրավել այն կալվածքները, որոնք հնարավոր չէր հափշտակել: Այսպիսով մեր կառավարությունը պաշտոնական բնույթ տվեց չարագործությանն ու հափշտակությանը»[89]: Իսկ թուրք պատմաբան և գրող

---

[86] *«Մշակ» (Թիֆլիս), 04. VII. 1915:*

[87] *Տրապիզոնի թեմին վիճակուոր Յովհաննէս արք. Նազլեանի յուշերը Մերձաւոր Արեւելքի 1914–1918 շրջանի քաղաքական-կրօնական դէպքերուն մասին. 1960, 589:*

[88] *Օրմանեան. 1923, 337:*

[89] *Պողոսյան. 2011, 319:*

Ահմեդ Ռեֆիք Ալթընայը, դատապարտելով Վանի «ապստամբությունը», միաժամանակ համոզմունք է հայտնում, որ իշխանությունները պետք է պատժեին միայն մեղավորներին, այլ ոչ թե ընտրեին Արևելյան հարցի լուծման ամենահեշտ տարբերակը՝ արևմտահայության տեղահանությունը[90]*:*

Նշենք, որ Վանի «ապստամբության» առիթով ողջ արևմտահայությանը բնաջնջման ենթարկելու խնդիրը վիճաբանության նյութ է դարձել նաև օսմանյան խորհրդարանի նիստերի հետպատերազմյան քննարկումներում, երբ Գոզանի (Սսի) երեսփոխան Մատթեոս Նալբանդյանը 1918 թ. նոյեմբերի իր ելույթում մատնանշում էր, որ «իրաւական կամ տրամաբանական ի՞նչ հիմ կայ, որ երկրի ամէն անկիւնը ապրող հայ տեղահան ըլլայ, ջարդուի եւ իր ինչքերը գրաւուելով իւրացուին Վանի դէպքերուն պատճառաւ»[91]*:*

Ի դեպ, ի զարմանս մեզ, համանման կարծիք է հայտնել նաև ադրբեջանական “Turan” *գործակալության խմբագիր՝ Շահին Հայդիևը, որը 2019 թ. փետրվարին այցելել էր Երևան: Խոսելով Հայոց ցեղասպանության մի շարք խնդիրների և Օսմանյան կայսրության դեմ հայերի կազմակերպած «ապստամբության» մասին՝ նա նշում է, որ «եթե նույնիսկ հայերը զենք են բարձրացրել, ապա սպանել պետք չէր»*[92]*:*

Ինչ վերաբերում է հայերի ազգային անկախության ձգտումը ցեղասպանության դրդապատճառ դիտարկելու թուրքական հերյուրանքին, ապա սեփական պետություն ունենալու ցանկությունը, ինչպես աշխարհի մյուս ժողովուրդների, այնպես էլ հայերի մոտ բնական, օրինական և կենսական մի պահանջ էր և անտրամաբանական էր այն մեկնաբանել ցեղասպանության քաղաքականության արդարացման բարձունքից: Հաշվի առնենք, որ 1913–1914 թթ. բարենորոգումների շրջանում հայկական գլխացավանքից ազատվելու համար հենց երիտթուրքերն էին առաջ քաշում հայկական ինքնավար պետություն ստեղծելու գաղափարը[93]*: Հետևաբար, հայկական կոտորածների դրդապատճառն անկախության գաղափարի մեջ փնտրելը պարզունակ անմտություն է:*

Եզրակացություն

Այսպիսով, բացահայտ կեղծիք են օտար հեղինակների, դիվանագետների այն կարծիքները, որ եթե տեղի չունենար Վանի 1915 թ. ապրիլյան հերոսամարտը, ապա արևմտահայությունը զերծ կմնար ցեղասպանությունից: Ըստ էության, միտումնավոր դիտավորությամբ՝ պատճառը շփոթվում է հետևանքի հետ: Հակառակ թուրքական կառավարության պաշտոնական ինքնարդարացման փորձի, Վանի հերոսական դոյամարտը բորբոքվեց միայն այն ժամանակ, երբ թուրքերն արդեն սկսել էին իրենց ջարդարարական քաղաքականությունը և ձեռնամուխ էին եղել կոտորելու Վանի նահանգի հայութ-

---

[90] Altınay. 1999, 10.

[91] *Տ ա տ ր ե ա ն. 1995, 44:*

[92] *Ադրբեջանցի լրագրողը պատմել է Երևան այցի մասին.* – https://mamul.am/am/news/143264.

[93] Геноцид армян: ответственность Турции и обязательство мирового сообщества, документы и комментарии. 2002, 130.

յանը: Հայերը զենքի ղիմեցին միայն իրենք իրենց պաշտպանելու համար՝ հակառակ թուրքական այն պատկերացման, որ տիրող կարգերի դեմ կազմակերպված ամեն տեսակի ըմբոստացում հոմանիշ է պետության դեմ ապստամբության, իսկ հայերն էլ համարվում են «խըյանեթներ» (ըմբոստներ), ուստի արժանի էին պատժի:

Նշենք, որ Վանում կազմակերպված հերոսական ինքնապաշտպանությունն անգամ ապստամբության ձևով ներկայացնելն էլ լիովին արդարացվում է, քանի որ այն ուղղված էր թուրքական դարավոր բռնակալության ու հայության բնաջնջման քաղաքականության դեմ:

Վանի «ապստամբությունն» ընդամենը ինքնապաշտպանական ձեռնարկում էր սպառնացող ջարդերի դեմ, որը Վանի տարբեր գավառներում սկսեց դրսեւորվել միաժամանակ, երբ նահանգապետ Թ. Ջևդեթը դավադրաբար սպանեց տեղի հայ առաջնորդներին: Հավանաբար, այդ նկատի ուներ Ալեքսանդրետում Գերմանիայի փոխհյուպատոս Հերման Հոֆման-Ցեոլքերզամպը, երբ գրում էր, որ «նկատի առնելով հայերի կրած բոլոր տառապանքները, զարմանալի չէ, որ Վանի հայերն ապստամբեցին»[94]:

Իրականում արևմտահայության կոտորածները կապ չունեին ո՛չ պատերազմի և ո՛չ էլ ապստամբության հետ, այլև պայմանավորված էին ուրիշ շարժառիթներով. ա) բուն պատճառը պանթուրքիզմի այն ծրագիրն էր, որը թելադրում էր բնաջնջման այն ռազմարշավը, որը 1914–1915 թթ. ձմռանն առաջնորդեց թուրք-քրդական զորքերին Ուրմիայի և Սալմաստի ասորի ու հայ խաղաղ բնակչության դեմ, իսկ հետագայում էլ առաջ բերեց համընդհանուր հալածանք Դիարբեքիրի և Մոսուլի նահանգներում, որին զոհ գնացին հակոբյանները, քաղկեդոնականները, նեստորականները և հայերը: Հետևաբար, առանց «Վանի ապստամբության» էլ կոտորածի այդ ծրագիրն անցկացվելու էր: բ) Վանի «ապստամբությունը» մի պատրվակ էր, որպեսզի օսմանյան պետության պանթուրանիզմի ծրագիրն արտաքին աշխարհին ներկայացվեր ռազմական անհրաժեշտության քողի տակ: Պատահական չէ, որ Կարինում Գերմանիայի հյուպատոս Մ. Է. ֆոն Շոյբներ-Ռիխտերն իր երկրի արտգործնախարարությանը հասցեագրած 1915 թ. օգոստոսի 10-ի հեռագրում խոստովանում է. «Թուրքական կառավարությունն օգտագործեց պատերազմական վիճակը և Վանում, Մուշում, Գարահիսարում բռնկված հայկական ապստամբությունների առիթը, որպեսզի Անատոլիայի հայերին բռնի արտաքսի Միջագետք»[95]: գ) Թուրքական իշխանությունները, առաջնորդվելով Բալկանյան պատերազմների «դասը» փորձով, զգուշանում էին, որ հայերն առաջին իսկ առիթի դեպքում պատրաստ էին «դավաճանել» Թուրքիային. հետևաբար, անհրաժեշտ էր նրանց կոտորել: Այդ մասին խոսում ենք Կ. Պոլսում ԱՄՆ-ի ներկայացուցչի 1917 թ. մայիսի զեկույցից: Սակայն բնաջնջման ծրագրի իրականացումը հետաձգվեց Դարդանելի մատույցներում հայտնված անգլիական նավատորմից ունեցած վախի պատճառով: Երբ դաշնակիցները հետ չպրտվեցին Դարդանելից, թուրքական կառավարությունը որոշեց կազմակերպել հայկական կոտորածներ, որպեսզի

---

[94] *Տ ա տ ր ե ա ն. 2005, 20:*

[95] *Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2006, 249:*

զերծ մնան վախից, որը թուրքական կառավարությանը ներշնչում էին հայ հեղափոխական կազմակերպությունները[96]:

Ավետիս Հարությունյան – պ. գ. թ., ս. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր: Գիտական հետաքրքրությունները՝ Առաջին աշխարհամարտ, Հայոց ցեղասպանություն, Վանի նահանգի պատմություն, Հայաստանի պատմական աշխարհագրություն: Հեղինակ է 2 մենագրության և շուրջ 200 հոդվածի:
ORCID: 0000-0002-5615-9016. harutunyanavetis16@aspu.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա-Դօ. 1917, Մեծ դէպքերը Վասպուրականում 1914–1915 թւականներին, Երեւան, «Լոյս», 488 էջ:

Ալեքսանյան Ս., Էվոյան Վ., Սարգսյան Ա. 1965, Մարդկությունը չպետք է ների (փաստաթղթեր հայ ժողովրդի բնաջնջման թուրքական հրեշավոր պլանների և Մեծ Եղեռնի մասին), «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1, էջ 34–106:

Ակունի Ս. 1920, Միլիոն մը հայերու ջարդի ամբողջական պատմութիւնը (1914–1918), Կ. Պոլիս, «տպագր. Յ. Աստուրեան որդիք», 319 էջ:

Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915–1916 թթ. հայոց ցեղասպանության մասին. 2002, կազմող և ներածության հեղինակ՝ Տիգրան Զաքարյան, Երևան, ԳԱԱ Հայոց Ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 32 էջ:

Ամերիկեան դեսպան Մր. Մօրկընթաուի յիշատակները եւ հայկական Եղեռնին գաղտնիքները. 1919, Կ. Պոլիս, տպ. «Օ. Արզուման», 350 էջ:

Անտոնեան Ա. 1921, Մեծ ոճիրը. Հայկական վերջին կոտորածները եւ Թալէադ փաշան. պաշտօնական հեռագիրներ բնագիրներու ստորագրութեամբ եւ բազմաթիւ պատկերներով, Պօսթըն, տպ. «Պահակ», 397 էջ:

Ավստրո-Հունգարիայի դիվանագետների հաղորդագրությունները Հայոց ցեղասպանության մասին (1915–1918 թթ.) (փաստաթղթերի ժողովածու). 2004, կազմող և առաջաբանի հեղինակ՝ Արտեմ Օհանջանյան, գերմաներենից թարգմանեց Վառլամ Մարտիրոսյան, Երևան, «Նահապետ», 130 էջ:

Ատանայի հայոց պատմութիւն. պատմագրական եղեռնագրական, ազատագրական, մշակութային, ազգագրական, վաւերագրական, ժամանակագրական. 1940, խմբագրեց՝ Բիւզանդ Եղիայեան, Անթիլիաս-Լիբանան, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1060 էջ:

Ատոսիտիս Ա. 2009, Հայերը եւ երիտասարդ թուրքերը, Կիլիկիոյ կոտորածները, ֆրանսերէնէ թարգմանեց Էմմա Ազարիկեան, Հալէպ, 166 էջ:

Աքչամ Թ. 2015, Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ. Հայոց ցեղասպանությունը և էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում, Երևան, թարգմանեց Հասմիկ Հարությունյան, Երևան, «Տիգրան Մեծ», 583 էջ:

Բեգիջանյան է. 2011, Իրանական տեսակետները Հայոց ցեղասպանության մասին, Երևան, «Էդիտ Պրինտ», 163 էջ:

[96] *Տե՛ս Ալեքսանյան, Էվոյան, Սարգսյան. 1965, 70:*

Գաղտնի տեղեկագիր Տօքթ. Եօհաննէս Լեփսիուսի (նախագահ գերման Մօտաւոր Արեւելքի Միսիոնին եւ Գերման եւ հայկական ընկերութեան). Հայաստանի ջարդերը, 1919, Կ. Պոլիս, «Ասատուրեան որդիք», 318 էջ:

Գեղամեան Ե. ա. քահ. 1917, Հայերի ազատագրական շարժումները XX դարում կամ Հայկական հարցի եօթներորդ շրջանը (մասն երկրորդ), Բագու, «տպ. Ն. Երեւանցեանի», 583–681 էջ:

Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2006, հ. I, հրատարակությունը և ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, գերմաներենից թարգմանությունը՝ Վալենտինա Մինալյանի, Երևան, «Հայաստան», 391 էջ:

Գերմանիան և Հայաստանը 1914–1918. դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու. 2008, հ. II, հրատարակությունը և ներածությունը՝ դոկտոր Յոհաննես Լեփսիուսի, գերմաներենից թարգմանությունը՝ Վալենտինա Մինալյանի, Երևան, «Հայաստան», 430 էջ:

Գիբբոնս Հ. Ա. 2003, Ժամանակակից պատմության ամենասև էջը: 1915-ի դեպքերը Հայաստանում: Փաստեր և պատասխանատվություններ, Երևան, «Նահապետ», 34 էջ:

Գուստ. Կ. 2002, Հայերի ցեղասպանությունը. աշխարհի հնագույն քրիստոնյա ժողովրդի ողբերգությունը, Երևան «Հայաստան», 294 էջ:

Գուստ Կ. (Հր.). 2008, Հայերի ցեղասպանությունը 1915–1916. Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից, Երևան, «Հայագիտակ», 720 էջ:

Դերկոմս Պրայս Ճ. 1919, Անգղիական կառավարութեան Կապոյտ գիրքը հայկական Մեծ Եղեռնի մասին (1915–1916), Կ. Պոլիս, տպ. Օ. Արզուման, 80 էջ:

Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին, հ. Ա, 1913–1923 թթ. 2008, նյութը հավաքեց, կազմեց, թարգմանեց, առաջաբանը գրեց և հրատարակության պատրաստեց՝ Արամայիս Բալոյանը, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 280 էջ:

Լեփսիուս Յ. 1916, Հաղորդագրութիւն Թուրքիայում հայ ժողովրդի վիճակի մասին, Պոտսդամ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 280 էջ:

Խաչատրյան Ա. 2010, Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 286 էջ:

Հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում (1915–1918 թթ.), օտարերկրյա պետությունների դիվանագիտական փաստաթղթերի վկայությունները, փաստաթղթերի ժողովածու 2011, հ. առաջին, կազմող, առաջաբանի հեղինակ՝ Լավրենտի Բարսեղյան, Երևան, «Նահապետ», 238 էջ:

Հայերի ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում (1915–1918 թթ.). օտարերկրյա պետությունների դիվանագիտական փաստաթղթերի վկայությունները, փաստաթղթերի ժողովածու. 2011, հ. երկրորդ, կազմող, առաջաբանի հեղինակ՝ Լավրենտի Բարսեղյան, Երևան, «Նահապետ», 407 էջ:

Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում. 1991 (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Մկրտիչ Գ. Ներսիսյանի խմբագրությամբ, Երևան, «Հայաստան» 758 էջ:

Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության արխիվի տեղեկագիր մատյան. Երուսաղեմի Հայոց պատրիարքարան. 2024, հ. Ա, արխիվի թվայնացումն ու նախնական ցուցակագրումն իրականացրել են Լուսինե Սահակյանը և Անի Սարգսյանը, աշխատասիրեցին Լուսինե Սահակյանը, Անի Ոսկանյանը, Անի Սարգսյանը, առաջաբանը՝ Լուսինե Սահակյանի, Երևան, «Լուսակն», 1040 էջ:

Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1267, ց. 1, գ. 6, ֆ. 457 (Մելիք-Ղարագյոզյանի հավաքածու), ֆ. 1, գ. 2:

Հայոց ցեղասպանության սկանդինավյան արձագանքը ցուցադրության կատալոգ, Երևան, 2014, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության ինստիտուտ-թանգարան, 114 էջ:

Հարությունյան Ա. Հ. 1983, Առաջին համաշխարհային պատերազմի ռազմադիվանագիտական պատմությունից (1914–1918), Երևան, «Հայաստան» 375 էջ:

Հովհաննիսյան Ն. 2004, Հայոց ցեղասպանությունը արաբական պատմագիտության քննական լույսի ներքո, Երևան, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 475 էջ:

Մելքոնյան Ռ., Պողոսյան Ն. 2022, Հայկական հարցն ու Հայոց ցեղասպանության խնդիրը թուրք բարձրաստիճան քաղաքական և ռազմական գործիչների հուշերում (XIX դարի վերջ – XX դարի կեսեր), Երևան, ԵՊՀ հրատ., 110 էջ:

Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918). 2005, հ. I, աշխատասիրությամբ Արթուր Պեյլերյանի, առաջաբանը՝ Ժան-Բատիստ Դյուրոզելի, ֆրանսերենից թարգմանեց Վարուժան Պողոսյանը, Երևան, «Հայաստան», 483 էջ:

«Մշակ», Թիֆլիս, 20. III. 1914, 04. VII. 1915:

Մուշեղ եպիսկոպոս. 1910, Ատանայի ջարդը եւ պատասխանատուները, Պոսթոն, տպ. «Արարատ», 63 էջ:

Մուսա Փրենս գործակցութեամբ Մարի-Անժ Մուսա Փրենսի, Հայասպանութիւնը մարդկութեան դէմ գործուած ոճիրներու ծիրէն ներս, Պէյրութ, 1987, Հայ պայքար մատենաշար «Արարատ» օրաթերթի, 32 էջ:

Յուհաննսոն Ա. 2008, Աքսորյալ ժողովուրդ. մեկ տարի հայոց պատմությունից, Երևան, «Գասպրինտ», 147 էջ:

Ներսիսյան Մ. Գ. 2005, Հայոց ցեղասպանության անհերքելի փաստաթղթեր, Երևան, «Գիտություն», 335 էջ:

Ներսիսյան Մ. Գ. 1965, Նյութեր հայկական կոտորածների մասին. – ՊԲՀ, № 1, էջ 85-100:

Ներսիսյան Մ. Գ. 1998, Պատմության կեղծարարները (հոդվածներ եվ հաղորդումներ) Երևան, «Գիտություն», 342 էջ:

Շիրակեան Ա. 1991, Կտակն էր նահատակներուն, Երևան, «Ադանա», 367 էջ:

Պողոսյան Ս. 2011, II, Թուրքերը թուրքերի մասին, Երևան, ԵՊՀ, 551 էջ:

Պրայս Լ. 1920, Հայկական ջարդերու փաստաթղթերը, Ա. մաս, կազմեց Վահան Միրագենց, Կ. Պոլիս, տպ. «Յովակիմեան», 175 էջ:

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության փաստաթղթերը Հայոց 1915–1916 թթ. ցեղասպանության մասին. 2001 կազմող, առաջաբանի, թարգմանության հեղինակ՝ Արմեն Մարուքյան, Երևան, ՀՀ ԳԱԱ հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 73 էջ:

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

Ջեմալ-փաշա 1927, Հայկական հարցը, Աշոտ Հովհաննիսյանի առաջաբանով, Յերեվան, «Պետհրատ», 125 էջ:

Ռային Իսմայիլ 1999, Հայերի կոտորածները, Երևան, «Հայաստան», 219 էջ:

Սահակյան Ռ. Օ. 2005, Արևմտահայության Ցեղսպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թ., Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 401 էջ:

Սոլախյան Կ. 2000, Թեժ մարտերը Վանի Քաղաքամիջում, Երևան, «Զանգակ-97», 92 էջ:

Տաշեան վրդ. Յ. հ. 1921, Հայ ազգի տպագրութիւնը գերմանական վաւերագիրներու համեմատ, մասն Ա, Վիեննա, տպ. «Մխիթարեան», 241 էջ:

Տատրեան Վ. 1995, Հայկական ցեղասպանութիւնը յետապատերազմեան օսմանեան խորհրդարանին մէջ. Հայ երեսփոխաններու մեղադրական ելոյթները, Վաթերթաուն, «Պայքար», 147 էջ:

Տատրյան Վ. 2005, Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական հիմնական փաստարկները. Աղավաղման և կեղծարարության ուսումնասիրություն, Երևան, Զորյան ինստիտուտ, 22 էջ:

Տրապիզոնի թեմին վիճակաւոր Յովհաննէս արք. Նազլեանի յուշերը Մերձաւոր Արեւելքի 1914–1918 շրջանի քաղաքական-կրօնական դէպքերուն մասին. 1960, թարգմանեց Հմայեակ Ստեփանեան, հ. Ա, Պէյրութ-Լիբանան, [Բոստոն] տպ. Հայ Կաթողիկե, 690 էջ:

Օհանջանյան Ա. 1997, 1915 թվական. անհերքելի վկայություններ, ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին, Երևան, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 238 էջ:

Օտեան Ե. 2004, Անիծեալ տարիներ 1914–1919 (անձնական յիշատակներ), աշխատասիրութեամբ Գրիգոր Հակոբյանի, Երևան, «Նաիրի», 581 էջ:

Օրմանեան Մ. 1929, արքեպիսկոպոս, Խոհք եւ խօսք իր կեանքին վերջին շրջանին մէջ, Երուսաղէմ, Սրբոց Յակոբեանց, 504 էջ:

Армянский вопрос и Геноцид армян в Турции. Материалы политического архива министерства иностранных дел кайзеровской Германии. 1995, Сборник, составитель, отв. редактор, автор предисловия, введения и примечаний профессор Вардгес Микаелян. Ереван, «Гитутюн», 642 с.

Армянский вопрос на страницах турецкой прессы (1982–1983). 1984, АН Арм. ССР, 97 с.

Геноцид армян: ответственность Турции и обязательство мирового сообщества, документы и комментарий. 2002, т. 1, составитель, отвстственный редактор, автор предисловия и комментария Ю. Г. Барсегов. Москва, «Гардарики», 816 с.

Геноцид армян перед судом. Судебный процесс Талаата паши. 2007, Стенографический отчет (под редакцией С. С. Степаняна). Ереван, 102 с.

Де Ногалес Р. 2006, Четыре года под полумесяцем. Москва. «Русский Вестник», 365 с.

Джамиль Гасанлы, Армянские добровольцы на Кавказском фронте 1914–1916, 2015 Апрель 24 (среда) 14:01:59, http://contact.az/docs/2015/Want%20to%20Say/033000110977ru htm#Vn5BeoWLS70

Документы французских архивов о геноциде армян. 1985, Ереван, Центр науч. информ. по обществ. наукам АН Арм.ССР, 44 с.

Записки Джемаль паши 1913–1919. 1923, Тифлис, Заккрайком РКП(б). 239 с.

Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств. 1878–1917 гг. серия III: 1914–1917 гг. т. 7, ч. 2. 1931–1938, М.–Л., Гос. соц. экон. изд. во 535 с.

Altınay R. A. 1999, Iki Komite Iki Kıtâl. Istanbul.

Bayur Yusuf Hikmet, Türk İnkılabı Tarihi, 10 kitap, 3 cilt. 1940–67, Ankara.

Danişmend İ. H. 1971, İzahlı Osmanlı Tarihi Kronolojisi 4 Cilt TAKIM, Cilt 4. İstanbul.

Fâiz El-Ghusein, Bedouin Natable of Damascus. 1917, Martyred Armenia. London, C. ARTHUR PEARSON, LTD, 56 p.

Feridun K. 1962, Yakın Tarihimiz, cilt. 1, Sayı: 1, Istanbul, 32 s.

Fisher S. N. 1960, The Middle East, A History, New York, 1959, Bulleten (Türk Tarih Kurumu), cilt XXIV, sayı 94, Ankara.

Genocide: Crime against Humanity. 1984, Special Issue of the "Armenian Review", Spring 1984, vol. 37, № 1.

Hülagü M. 2007, Sultan Abdülhamid in sürgün günleri: Hususi doktoru Atif Hüsein beyin hatiraları. Istanbul, PAN YAYINLARI, 347 s.

Mgr Mouchegh [Serobian]. 1909, Les Vêpres ciliciennes. Les responsabilités. Faits et documents. Alexandrie, 95 p.

Pomiankowski J. Von. 1928, Der Zusammenbruch des Ottomanishen Reiches: Erinnerungen an die Türkei aus der Zeit des Weltkrieges. Zürich, Amalthea-Verlag, 524 p.

Prince M. 1915, Un génocide impuni: L'Armenocide, Introduction, Beyrouth, 1967, Heidelberg Press, 101 p.

Uras E. 1950, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi. Ankara, 1950, "Turkeiya Matbaacılık Vev Jazetecılik A. O. Kitaplari" 785 s.

Yalman E. A. 1930, Turkey in the World War, New Haven. London Yale University Press, 310 p.

REFERENCES

A-Do. 1917, Mets depk'ery Vaspurakanum 1914–1915 t'wakannerin, Yerevan, «Loys», 488 ej (In Armenian).

Ak'ch'am T'. 2015, Yeritt'urk'eri gortsats vochiry mardkut'yan dem. Hayots' ts'eghaspanut'yuny yev et'nik ztumnery Osmanyan kaysrut'yunum, Yerevan, t'argmanets' Hasmik Harut'yunyan, Yerevan, «Tigran Mets», 583 ej (In Armenian).

Alek'sanyan S., Evoyan V., Sargsyan A. 1965, Mardkut'yuny ch'petk' e neri (p'astat'ght'er hay zhoghovrdi bnajnjman t'urk'akan hreshavor planneri yev Mets Yegherni masin), «Banber Hayastani arkhivneri», № 1, ej 34–106 (In Armenian).

Amerikayi Miats'yal Nahangneri vaveragrery 1915–1916 t't'. hayots' ts'eghaspanut'yan masin. 2002, kazmogh yev neratsut'yan heghinak, Tigran Zak'aryan, Yerevan, GAA Hayots' TS'eghaspanut'yan t'angaran-institut, 32 ej (In Armenian).

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

Amerikean despan Mr. Morkynt'aui yishataknery yev haykakan Yeghernin gaghtnik'nery. 1919, K. Polis, tp. «O. Arzuman», 350 ej (In Armenian).

Antonean A. 1921, Mets vochiry. Haykakan verjin kotoratsnery yev T'alead p'ashan. pashtonakan heragirner bnagirneru storagrut'eamb yev bazmat'iw patkernerov, Post'yn, tp. «Pahak», 397 ej (In Armenian).

Armyanskiy vopros i Genōtsid armyan v Turtsii. Materialy politicheskogo arkhiva ministerstva inostrannykh del kayzerovskoy Germanii. 1995, Sbornik, sostavitel', otv. redaktor, avtor predisloviya, vvedeniya i primechaniy Vardges Mikayelyan. Yerevan, «Gitutyun», 642 s (In Armenian).

Armyanskiy vopros na stranitsakh turetskoy pressy (1982–1983). 1984, AN Arm. SSR, 97 s.

Atanayi hayots' patmut'iwn. patmagrakan yeghernagrakan, azatagrakan, mshaku-t'ayin, azgagrakan, vawyeragrakan, zhamanakagrakan. 1940, khmbagrets', Biwzand Yeghiayean, Ant'ilias-Libanan, tp. Kat'voghikosut'ean Hayots' Metsi Tann Kilikioy, 1060 ej (In Armenian).

Atositis A. 2009, Hayery yev yeritasard t'urk'ery, Kilikioy kotoratsnery, franserene t'argmanets' Emma Azarikean, Halep, 166 ej (In Armenian).

Avstro-Hungariayi divanagetneri haghordagrut'yunnery Hayots' ts'eghaspanut'yan masin (1915–1918 t't'.) (p'astat'ght'eri zhoghovatsu). 2004, kazmogh yev arajabani heghinak, Artem Ohanjanyan, germanerenits' t'argmanets' Varlam Martirosyan, Yerevan, «Nahapet», 130 ej (In Armenian).

Begijanyan E. 2011, Iranakan tesaketnery Hayots' ts'eghaspanut'yan masin, Yerevan, «Edit Print», 163 ej (In Armenian).

De Nogales R. 2006, Chetyre goda pod polumesyatsem. Moskva, "Russkiy Vestnik", 365 s (In Russian).

Derkoms Prays CH. 1919, Angghiakan karavarut'ean Kapoyt girk'y haykakan Mets Yegherni masin (1915–1916), K. Polis, tp. O. Arzuman, 80 ej (In Armenian).

Dzhamil' Gasanly, Armyanskiye dobrovol'tsy na Kavkazskom fronte 1914–1916, 2015 Aprel' 24 (sreda) 14:01:59, http://contact.az/docs/2015/Want%20to%20Say/03300 0110977ru htm#Vn5BeoWLS70 Dokumenty frantsuzskikh arkhivov o genotside armyan. 1985, Yerevan, Tsentr nauch. inform. ob obshchestv. naukam AN Arm. SSR, 44 s.

Gaghtni teghekagir Tok't'. Yeohannes Lep'siusi (nakhagah german Motawor Arevelk'i Misionin yev German yev haykakan ynkerut'ean). Hayastani jardery, 1919, K. Polis, «Asaturean vordik'», 318 ej (In Armenian).

Geghamean Ye. a. k'ah. 1917, Hayeri azatagrakan sharzhumnery XX darum kam Haykakan harts'i yeot'nerord shrjany (masn yerkrord), Bagu, «tp. N. Yerevants'eani», 583–681 ej (In Armenian).

Genotsid armyan pered sudom. Sudebnyy protsess Talaata pashi. 2007, Stenograficheskiy otchet (pod redakciej S. S. Stepanyana). Yerevan, S. Stepanyan, 102 s (In Armenian).

Genotsid armyan: otvetstvennost' Turtsii i obyazatel'stvo mirovogo soobshchestva, dokumenty i kommentariy. 2002, t. 1, sostavitel', otvetstvennyy redaktor, avtor predis-loviya i kommentariya Yu. G. Barsegov. Moskva, «Gardariki», 816 s (In Armenian).

Germanian yev Hayastany 1914–1918. divanagitakan p'astat'ght'eri zhoghovatsu. 2006, h. I, hratarakut'yuny yev neratsut'yuny, doktor Yohannes Lepsiusi, germanerenits' t'argmanut'yuny, Valentina Minalyani, Yerevan, «Hayastan», 391 ej (In Armenian).

Germanian yev Hayastany 1914–1918. divanagitakan p'astat'ght'eri zhoghovatsu. 2008, h. II, hratarakut'yuny yev neratsut'yuny, doktor Yohannes Lep'siusi, germanerenits' t'argmanut'yuny, Valentina Minalyani, Yerevan, «Hayastan», 430 ej (In Armenian).

Gibbons H. A. 2003, Zhamanakakits' patmut'yan amenasev ejy: 1915-i depk'ery Hayastanum: P'aster yev pataskhanatvut'yunner, Yerevan, «Nahapet», 34 ej (In Armenian).

Gust (Hr.). V. 2002, Hayeri ts'eghaspanut'yuny. ashkharhi hnaguyn k'ristonya zhoghovrdi voghbergut'yuny, Yerevan, «Hayastan», 294 ej (In Armenian).

Gust V. (Hr.). 2008, Hayeri ts'eghaspanut'yuny 1915–1916. Germaniayi artak'in gortseri nakhararut'yan k'aghak'akan arkhivi p'astat'ght'erits', Yerevan, «Hayagitak», 720 ej.

HA, t'iv 1: Akuni S. 1920, Milion my hayeru jardi amboghjakan patmut'iwny (1914–1918), K. Polis, «tpagr. Y. Asturean vordik'», 319 ej (In Armenian).

Harut'yunyan A. H. 1983, Arajin hamashkharhayin paterazmi razmadivanagitakan patmut'yunits' (1914–1918), Yerevan, «Hayastan» 375 ej (In Armenian).

Hayastani azgayin arkhiv, f. 1267, ts'. 1, g. 6, f. 457. Cucadrutyan katalog (Melik'-Gharagyozyani havak'atsu), f. 1, g. 2: Hayots' ts'eghaspanut'yan skandinavyan ardzagank'y, Yerevan, 2014, HH GAA Hayots' ts'eghaspanut'yan institut-t'angaran, 114 ej (In Armenian).

Hayeri ts'eghaspanut'yuny Osmanyan kaysrut'yunum. 1991 (p'astat'ght'eri yev nyut'eri zhoghovatsu), Mkrtich' G. Nersisyani khmbagrut'yamb, Yerevan, «Hayastan» 758 ej (In Armenian).

Hayeri ts'eghaspanut'yuny Osmanyan T'urk'iayum (1915–1918 t't'.), otarerkrya petut'yunneri divanagitakan p'astat'ght'eri vkayut'yunnery, p'astat'ght'eri zhoghovatsu 2011, h. arajin, kazmogh, arajabani heghinak` Lavrenti Barseghyan, Yerevan, «Nahapet», 238 ej (In Armenian).

Hayeri ts'eghaspanut'yuny Osmanyan T'urk'iayum (1915–1918 t't'.). otarerkrya petut'yunneri divanagitakan p'astat'ght'eri vkayut'yunnery, p'astat'ght'eri zhoghovatsu. 2011, h. yerkrord, kazmogh, arajabani heghinak` Lavrenti Barseghyan, Yerevan, «Nahapet», 407 ej (In Armenian).

Haykakan harts'i yev Hayots' ts'eghaspanut'yan arkhivi teghekagir matyan. Yerusaghemi Hayots' patriark'aran. 2024, h. A, arkhivi t'vaynats'umn u nakhnakan ts'uts'akagrumn irakanats'rel yen Lusine Sahakyany yev Ani Sargsyany, ashkhatasirets'in Lusine Sahakyany, Ani Voskanyany, Ani Sargsyany, arajabany, Lusine Sahakyani, Yerevan, «Lusakn», 1040 ej (In Armenian).

Hovhannisyan N. 2004, Hayots' ts'eghaspanut'yuny arabakan patmagitut'yan k'nnakan luysi nerk'vo, Yerevan, HH GAA Arevelagitut'yan institut, 475 ej (In Armenian).

Italiayi artak'in gortseri nakhararut'yan patmakan divanagitakan arkhivi vaveragrery Haykakan harts'i masin, h. A, 1913–1923 t't'. 2008, nyut'y havak'ets', kazmets', t'argmanets', arajabany grets' yev hratarakut'yan patrastets', Aramayis Baloyany, Yerevan, Hayots' ts'eghaspanut'yan t'angaran-institut, 280 ej (In Armenian).

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

Jemal-p'asha 1927, Haykakan harts'y, Ashot Hovhannisyani arajabanov, Yerevan, «Pethrat», 125 ej (In Armenian).

Khach'atryan A. 2010, Arevelahay yev t'urk' divanagitakan haraberut'yunnery, Yerevan, HH GAA patmut'yan institut, 286 ej (In Armenian).

Lep'sius Y. 1916, Haghordagrut'iwn T'urk'iayum hay zhoghovrdi vichaki masin, Potsdam, Hayots' ts'eghaspanut'yan t'angaran-institut, 280 ej (In Armenian).

Melk'vonyan R., Poghosyan N. 2022, Haykakan harts'n u Hayots' ts'eghaspanut'yan khndiry t'urk' bardzrastichan k'aghak'akan yev razmakan gortsich'neri husherum (XIX dari verj – XX dari keser), Yerevan, YePH hrat., 110 ej (In Armenian).

Mets terut'yunnery, Osmanyan kaysrut'yuny yev hayery fransiakan arkhivnerum (1914–1918). 2005, h. I, ashkhatasirut'yamb Art'ur Peyleryani, arajabany, Zhan-Batist Dyurozeli, franserenits' t'argmanets' Varuzhan Poghosyany, Yerevan, «Hayastan», 483 ej (In Armenian).

Mezhdunarodnyye otnosheniya v epokhu imperializma. Dokumenty iz arkhivov tsarskogo i vremennogo pravitel'stv. 1878–1917 gg. seriya III: 1914–1917 gg. t. 7, ch. 2, M.–L., 1931–1938 gos. sots. ekon. izd. vo 535 s.

«Mshak», T'iflis, 20. III. 1914, 04.VII. 1915 (In Armenian).

Musa P'rens gortsakts'ut'eamb Mari-Anzh Musa P'rensi, Hayaspanut'iwny mardkut'ean dem gortsuats vochirneru tsiren ners, Peyrut', 1987, Hay payk'ar matenashar «Ararat» orat'ert'i, 32 ej (In Armenian).

Mushegh yepiskopos. 1910, Atanayi jardy yev pataskhanatunery, Post'von, tp. «Ararat», 63 ej (In Armenian).

Nersisyan M. G. 1965, Nyut'er haykakan kotoratsneri masin. – PBH, № 1, ej 85-100 (In Armenian). Nersisyan M. G. 1998, Patmut'yan keghtsararnery (hodvatsner yev haghordumner) Yerevan, «Gitut'yun», 342 ej (In Armenian).

Nersisyan M. G. 2005, Hayots' ts'eghaspanut'yan anherk'eli p'astat'ght'er, Yerevan, «Gitut'yun», 335 ej (In Armenian).

Ohanjanyan A. 1997, 1915 t'vakan. anherk'eli vkayut'yunner, avstriakan vaveragrery hayots' ts'eghaspanut'yan masin, Yerevan, HH GAA Hayots' ts'eghaspanut'yan t'angaran-institut, 238 ej (In Armenian).

Ormanean M. 1929, ark'episkopos, Khohk' yev khosk' ir keank'in verjin shrjanin mej, Yerusaghem, Srbots' Yakobeants', 504 ej (In Armenian).

Otean Ye. 2004, Anitseal tariner 1914–1919 (andznakan yishatakner), ashkhatasirut'eamb Grigor Hakobyani, Yerevan, «Nairi», 581 ej (In Armenian).

Poghosyan S. 2011, II, T'urk'ery t'urk'eri masin, Yerevan, YePH, 551 ej (In Armenian).

Prays L. 1920, Haykakan jarderu p'astat'ght'ery, A. mas, kazmets' Vahan Miragents', K. Polis, tp. «Yovakimean», 175 ej (In Armenian).

Rayin Ismayil 1999, Hayeri kotoratsnery, Yerevan, «Hayastan», 219 ej (In Armenian).

Rusastani artak'in gortseri nakhararut'yan p'astat'ght'ery Hayots' 1915–1916 t't'. ts'eghaspanut'yan masin. 2001 kazmogh, arajabani, t'argamut'yan heghinak, Armen Maruk'yan, Yerevan, HH GAA hayots' ts'eghaspanut'yan t'angaran-institut, 73 ej (In Armenian).

Sahakyan R. O. 2005, Arevmtahayut'yan TS'eghspanut'yuny yev ink'napasht-panakan krivnery 1915 t'., Yerevan, HH GAA patmut'yan institut, 401 ej (In Armenian).

Shirakean A. 1991, Ktakn er nahataknerun, Yerevan, «Adana», 367 ej (In Armenian).

Solakhyan K. 2000, T'ezh martery Vani K'aghak'amijum, Yerevan, «Zangak-97», 92 ej (In Armenian).

Tashean vrd. Y. h. 1921, Hay azgi tpagrut'iwny germanakan vawyeragirneru hamemat, masn A, Viyenna, tp. «Mkhit'arean», 241 ej (In Armenian).

Tatrean V. 1995, Haykakan ts'eghaspanut'iwny yetapaterazmean osmanean khorhrdaranin mej. Hay yeresp'vokhanneru meghadrakan yeloyt'nery, Vat'ert'aun, «Payk'ar», 147 ej (In Armenian).

Tatryan V. 2005, Hayots' ts'eghaspanut'yan zhkhtman t'urk'akan himnakan p'astarknery. Aghavaghman yev keghtsararut'yan usumnasirut'yun, Yerevan, Zoyan institut, 22 ej (In Armenian).

Trapizoni t'emin vichakawor Yovhannes ark'. Nazleani yushery Merdzawor Arevelk'i 1914–1918 shrjani k'aghak'akan-kronakan depk'erun masin. 1960, t'argmanets' Hmayeak Step'anean, h. A, Peyrut'-Libanan, [Boston] tp. Hay Kat'voghike, 690 ej (In Armenian).

Yuhanson A. 2008, Ak'soryal zhoghovurd. mek tari hayots' patmut'yunits', Yerevan, «Gasprint», 147 ej (In Armenian).

Zapiski Dzhemal' pashi 1913–1919. 1923, Tiflis, Zakkraykom RKP(b). 239 s.

К ВОПРОСУ ОБ ОТРИЦАНИИ КОНЦЕПЦИИ «ВОССТАНИЯ» В ВАНЕ 1915 Г.

АВЕТИС АРУТЮНЯН

Р е з ю м е

Ключевые слова: Ванское «восстание» 1915 г., самооборона, резня, отрицание подлог, бунт, пантюркизм, Геноцид армян, турецкая дипломатия, европейская дипломатия.

Одной из восточных провинций Османской Турции была провинция Ван, центром которой был древний армянский город Ван. В апреле 1915 года армяне организовали самооборону в Ване и ряде других мест, спасаясь от турецких погромов. Вопрос самообороны Вана имеет как политическую, так и научную значимость, поскольку он стал причиной разрыва отношений между армянами и турками, живущими в Османской империи, и явился одним из мотивов Геноцида армян в 1915 г. Центральный комитет младотурецкой партии «Единение и прогресс» (Иттихад ве теракки) представил фальшивое идеологическое обоснование для переселения и уничтожения западных армян, чтобы оправдать деятельность руководства, ставшую причиной геноцида 1,5 млн западных армян. Т урецкие политические круги

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2025 № 2

выдвинули ложный тезис о Ванском «восстании» как проявлении «предательства» армян и мотиве армянских погромов. Подобная трактовка турецких и некоторых иностранных политиков не соответствует истине и является искажением исторических реалий. Следует отметить, что тема «восстания» западных армян впервые стала предметом спекуляции турецких властей в 1909 году в связи с резней в Адане – одной из областей Османской империи. Однако она была задействована с объявлением Первой мировой войны и началом военных действий на Кавказском фронте. Мнения турецких и зарубежных историков о том, что если бы не было героической апрельской обороны Вана 1915 года, то западные армяне избежали бы геноцида, является фальсификацией фактов. В действительности героическая борьба за Ван началась тогда, когда турки организовали и осуществили резню армян. Следует отметить, что представление героической самообороны Вана в качестве восстания вполне оправдано, поскольку она была направлена против многовековой турецкой тирании и политики истребления армян.

Аветис Арутюнян – к. и. н., профессор кафедры истории Армении Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна. Научные интересы: Первая мировая война, Геноцид армян, история провинции Ван, историческая география Армении. Автор 3-х монографий и около 200 статей.
ORCID: 0000-0002-5615-9016. harutunyanavetis16@aspu.am

ON THE ISSUE OF DENIAL OF THE CONCEPT OF “REBELLION” OF VAN IN 1915

AVETIS HARUTYUNYAN

S u m m a r y

Key words: Van “rebellion” in 1915, self-defense, massacre, forgery, riot, Pan-Turkism, the Armenian Genocide, Turkish diplomacy, position of European diplomacy.

One of the eastern provinces of the Ottoman Turkey was the province of Van, the center of which was the ancient Armenian city Van. In April of 1915, the Armenians organized self-defense in Van and in a number of other places to escape the Turkish massacres. The issue of self-defense of Van has both political and scientific significance, as it caused rupture in relations between the Armenian and Turkish peoples living in the Ottoman Empire and was one of the motives for the Armenian Genocide in 1915. The Central Committee of “Union and Progress” party (Ittihad ve Terakki) of Young Turks presented a false ideological grounds for resettlement and extermination of Western Armenians to justify the

actions of the leadership which resulted in the genocide of 1,5 million Western Armenians. Turkish political circles put forward a false thesis about the "rebellion" of Van as a manifestation of "betrayal" of the Armenians and the motive for the Armenian massacres. Such interpretation by Turkish and some foreign historians does not correspond to the truth and is a distortion of historical realities. It should be noted that the issue of the "rebellion" of Western Armenians first became a subject of speculation by the Turkish authorities in 1909 in connection with the massacre in Adana, one of the provinces of the Ottoman Empire. However, it was activated with the declaration of the First World War and the beginning of military operations on the Caucasian Front. The opinion of Turkish and foreign historians that if it were not for the heroic defense of Van in April of 1915, the Western Armenians would have avoided the genocide is a falsification of facts. In reality, the heroic struggle for Van began when the Turks organized and carried out the massacre of the Armenians. It should be noted that presentation of the heroic self-defense of Van as a rebellion is entirely justified, since it was directed against centuries-old Turkish tyranny and the policy of extermination of Armenians.

Avetis Harutyunyan – Candidate of Historical Sciencies, Professor at the Chair of the History of Armenia at the State Pedagogical University after Kh. Abovyan. Scientific interests: First World War, the Armenian Genocide, history of Van province, historical geography of Armenia. Author of 3 monographs and about 200 articles.
ORCID: 0000-0002-5615-9016. harutunyanavetis16@aspu.am